

9509

Բ

Պը լեռաբներ բույր յերկրների, միացեք

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՏԱՍԸ ՏԱՐԻՆ



ԽՍՀ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1929

• ЗКИ 1
• 4-68

1 DEC 2009
25 SEP 2006

ՅԿԱ
4-68

Ի. ԿՈՄՈՐ

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՏԱՎԸ ՏԱՐԻՆ



ՅԵՐՐՈՐԴ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻ ՀԱՄԱՇԽԱՐ-
ՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմինտերնի տեղը պատմության մեջ. — Կոմինտերնը ստեղծելուց հետո անմիջապես, 1919 թ. ապրիլին, Լենինը գրեց մի հոդված, վորի մեջ վորոշում և «Յերրորդ Ինտերնացիոնալի տեղը պատմության մեջ»: «Առաջին Ինտերնացիոնալը*, — գրում է Լենինը, — հիմք դրեց միջազգային պրոլետարական այն պայքարին, վոր մղվում ե սոցիալիզմի համար: Յերկրորդ Ինտերնացիոնալը** — դա մի շրջան եր, վոր հող պատրաստեց մասսայական լայն շարժումը մի շարք յերկրներում տարածելու համար: Յերրորդ Ինտերնացիոնալը ընդունեց Յերկրորդ Ինտերնացիոնալի աշխատանքի պտուղները, մերժեց նրա ոպորտունիստական, սոցիալ-շովինիստական, բուրժուական և մանր-բուրժուական արատները և սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան»:

Ռուսաստանի պրոլետարիատը սկսեց, իսկ համաշխարհային պրոլետարիատը կավարտի սոցիալիստական հեղափոխությունը. — Դրանումն ե կայանում Կոմունիստական Ինտերնացիոնալի համաշխարհային պատմական հսկայական նշանակությունը: Պրուլետարական դիկտատուրայի իրականացումը — դա մեծ խնդիր ե մի ամբողջ պատմական եպօխայի, վորի չափը մենք՝ լենինիստներս՝ չենք կարող՝ վորոշել որացուցային ժամկետներով: Տասը տարի յե ինչ գոյություն ունի և զարգանում է սոցիալիզմը կառուցող մեր յերկիրը՝ պրոլետարական դիկտատուրայի առաջին ամրոցը — Խորհրդային Միությունը: «Ռուսաստանի պրոլետարիատին վիճակից սկսելու մեծ պատիվը, — ասում է Լենինը իր վողջույնի խոսքում 1917 թ. մեր կուսակցության ապրիլյան կոնֆերենցիայի բացմանը, — բայց նա չպետք ե մոռանա, վոր իր շարժումն ու հեղափոխությունը կազմում են միայն մի մասը համաշխար-

* 1864 — 1872 թ. թ.

** 1889 — 1914 թ. թ.

Главлит № А 13352.

Заказ 353.

Тираж 3.000 экз.



4224 91

հային հեղափոխական պլրուետարական շարժման, վորը... որըստորեւ ավելի ու ավելի ուժգին և ծավալվում»։ Լենինի այս տեսակետից, Խորհրդային Միության բանվոր դասակարգը Կոմինտերնի տագնամյա պատմությունը պետք է ընդունի վորպես մի ետապ պլրուետարիատի համաշխարհային դիմատառությայի համար մղվող ուղաքարի մեծ եպոխայի։ Խուսաստանի բանվորը սկսեց, ամբողջ աշխարհի հեղափոխական պլրուետարիատը՝ Կոմինտերնի ղեկավարությամբ՝ կավարտի այդ գործը։

Տուր տարվա ընթացքում Կոմինտերնը փոքրիկ բջիջոց դարձավ համաշխարհային զորեղ կազմակերպություն։ — Կոմինտերնի մարտական գործնեյության տասը տարին լիովին հաստատում են նրա առաջին կոնգրեսի ընդունած մանիֆեստի այս խոսքը «Յերրորդ Խոտերնացիոնալը հանդիսանում եւ մասսայական բացարձակ գործողության Խոտերնացիոնալ, հեղափոխական իրազործման Խոտերնացիոնալ, գործի Խոտերնացիոնալ։ Կոմինտերնի առաջին հիմնադիր կոնգրեսին (1919 թ. մարտ) ներկայացված եյին միայն 11 կոմունիստական կուսակցություններ, իսկ մնացած պատգամավորները ներկայացնում եյին լոկ խմբեր, կազմակերպվող կոմիուսակցությունների լոկ բջիջներ, մինչդեռ VI կոնգրեսի* (1921 թ. հուլիս - օգոստոս) աշխատանքներին մասնակցում եյին 59 կոմունիստական կուսակցություններ։ Հենց միայն այդ թիվը վկայում եւ այն մասին, վոր Կոմինտերնը իր գոյության տասը տարվա ընթացքում դարձել եւ համաշխարհային կուսակցություն, դարձել եւ համաշխարհային կազմակերպություն, վորն իր ցանցը փոել և յերկրագնդի բոլոր մասերում։ Կոմինտերնի կազմակերպման ժամանակ Խորհրդային հանրապետությունները յենթակա եյին դաժան բլոկադային համաշխարհային իմպերիալիզմի կողմից, իսկ այն ամենը, ինչ կատարվում էր յերկրի ներսում, բուրժուազիայի և նրա մամուլի կողմից — ըստ Լենինի խոսքերի — յենթարկվում եր իսկական դավադիր լուսիան։ Բուրժուազիան ճգնեց դավադիր լուսիան մատնել նաև Կոմունիստական Խոտերնացիոնալը։ Բայց այդ ժամանակները վաղուց են անցել, այժմ արդեն վոչ վոք լուսիանը չի պահպանում Կոմինտերնի նկատմամբ։ Բուրժուազիայի այսորվա

* Մեր հրատարակությամբ նոր լույս տեսավ «Կոմինտերնի VI կոնգրեսը» գրքույկը։

լոգունգը Կոմինտերնի նկատմամբ՝ ասում եւ — խեղդաման արյունուտ հետապնդումն։

Կոմինտերնի VI համաշխարհային կոնգրեսին մասնակցող 59 կուսակցություններից մեծամասնությունը գործում եւ անկեցալ, թագուառում, իսկ մնացած կուսակցությունները հետգիետե նույնպես զրկվում են լեզաւ, բացարձակ գործելու համարվորություններից։ Այն հանգամանքը, վոր Կոմինտերնի սեղիաները այդպես հետապնդվում են, — դա ամենալավ ապացույցն եւ հանդիսանում, վոր «կոմունիզմի ուրվականը» դարձել եւ իրնք ահեղ և մեծացող վտանգ՝ համաշխարհային բուրժուազիայի համար։ Այն վտանգը, վորը բուրժուազիան և նրա հետ զաշնագիր սոց.-ռեմոկրատիան ճգնում են վերացնել, — այդ վտանգը անդադար մեծանում եւ և համաշխարհային պրոլետարիատը հաղթությունների ու պարտությունների միջոցով ընթանում եւ դեպի վերջնական անխուսափելի հաղթանակ։ «Թող բուրժուազիան գաղաղի, թող նա դարձաւ սպանի հազարավոր բանվորներ, — հաղթանակը մերն ե, համաշխարհային կոմունիստական հեղափոխության հաղթանակը» (Լենին, Կոմինտերի առաջին կոնգրեսի բացմանը արտասանած ճառից)։

Իմպերիալիզմը, — ասում եւ Կոմինտերնի ծրագիրը, — ամբողջ աշխարհը կապկապում եւ փինանսական կապիտալի շղթաներով, արյունով, յերկաթով ու քաղցով հարկազրելով բոլոր յերկրների պրոլետարներին, ժողովուրդներին ու ցեղերին յենթարկվել իր լծին, հակայական չափերով սրելով շահագործումը, ճնշումը և պրոլետարիատին կեղեքելը։

Սոցիալ-դեմ. ոպորտունիստական II Խոտերնացիոնալը դարձավ իմպերիալիզմի ազենտուրա՝ բանվոր դասակարգի շարքերում։ Սակայն ամենուրեք, ամբողջ աշխարհում, այդ հականեղափոխական միությանը «անխուսափելիորեն հակազրպում եւ III Կոմունիստական Խոտերնացիոնալը՝ բանվոր դասակարգի միջազգային կազմակերպությունը, վորն իր մեջ մարմանացնում եւ ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորների իսկական միասնականությունը» (Կոմինտերնի ծրագիրը, ներածություն)։ Լենինի ղեկավարությամբ ստեղծվեց Կոմինտերնը։ Լենինիզմի գրոշակի տակ և Լենինյան Կոմունիստական Կուսակցության ղեկավարության ներքո՝ Կոմինտերնը իր գոյության առաջին տասնամյակում ամբացավ, աճեց ու դարձավ բոյլշևիկյան հեղափոխական անհաղթելի գորեղը ուժ։

ԵՆԴԻԵՄ ՈՒԹՈՐՄԻԶՄ ՅԵՎ ԴԱՎԱՑՄՈՒԹՅԱՆ
ՀՈԳՈՒԾ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՍՏԵՂԾՄԱՆ

Պատերազմի Ա Ենթերնացիոնալին դարձեց նեխված դիակ. — 1914 թ. ոգոստոսի 4-ին — համաշխարհային պատերազմի սկըսման որը — Ռուսական բռուրդը գերմանական սոցիալ-դեմոկրատիային անվանեց նեխսվող դիակ: Լենինը տվեց հաշվեհարդարը — « Ա Ի ինտերնացիոնալը մեռավ պարտվելով ողոքառուն իզմից: Կորչի ողոքառուն իզմը և կեցցե... Ա Ի ինտերնացիոնալը »: Նույն որը բաց թողնվեց ՌՍԴԲԿ (Բ) կենտրոնի մանիֆեստը իմպերիալիստական պատերազմի մասին: Բոյլզեկիների այդ մանիֆեստը պատերազմը խարանում ե վորպես իմպերիալիստական սպանդանոցի, վոր առաջ են բերել տիրող գասակարգերը — ֆինանսական և արդյունաբերական բուրժուազիան ու նրանց կառավարությունը: «Պատերազմը հանդիսանում ե կապիտալիստական սիստեմի խորտակման սկիզբը, — ասում ե կոչը, — նա առաջացնում ե տնտեսական և քաղաքական կրիզիսի ուժերի աճումն, խորացնում ու սրում ե աշխատավոր մասսաների անրավականությունը, նրանց տանում ե դեպի քաղաքացիական պատերազմ: Մոցիալիստները վոչ թե պիտի վախենան քաղաքացիական պատերազմից, այլ պետք ե նախապարաստվեն այդպիսի պատերազմի համար, պրոլետարական պատերազմի համար»: Այսուհետև մանիֆեստը մերկացնում ե սոց-դեմ. կուսակցությունների պարագլուխների դավաճանությունը և կոչ ե անում բոլոր հետևողական ինտերնացիոնալիստաներին՝ «մասսաներին բացատրել պատերազմի խական բնույթը, մերկացնել այդ պարագլուխների դավաճանությունը, խզել նրանց հետ ամեն տեսակի հարաբերություն, մասսաների մեջ աշխատանք տանել հետեւյալ լողունգի տակ — պայքարել ընդդեմ իմպերիալիստական պատերազմի, իմպերիալիստական պատերազմի՝ ընդդեմ սեփական կառավարությունների, հոգությունների, հոգություն պարագաների ընդդեմ սեփական կառավարությունների, հոգություն պարագաների ընդդեմ սեփական կառավարությունների»:

Դրանով և դրվեց ԱՆՏԵՐՆԱԳԻՈՆԱԼԻ ստեղծման համար մղվող պայքարի իդեոլոգիական պլատֆորման։ Այն մոմենտին, յերբ համաշխարհային սպանդանոցի կատաղած տարերքը հնձում էր իր արյունոտ բերքը, մարդկանց մի փոքրիկ խմբակ, քշված հարեւան Շվեցարիա, իրեն նպատակ դրեց միջազգային բանվորական շարժման բոլոր հեղափոխական ինտերնացիոնալ ուժերը համախմբել հետևյալ լոգունգի շուրջը։ — ի մոլերի ալիստական պատերազմի։ Այդ պայքարի դժվարությունները ամենից լավ բնորոշում են այն միջազգային կոնֆերենցիաները, վորոնք պատերազմի ժամանակ տեղի ունեցան Շվեցարիայում։ Դեռ ևս 1912 թ. ԱՆՏԵՐՆԱԳԻՈՆԱԼԻ Բազելի կոնգրեսը հանեց մի վորոշում, ըստ վորի՝ պատերազմի հետևանքով առաջացած կրիզիսը սոցիալ-դեմոկրատները պետք է ոգտագործեյին «կապիտալիզմի խորտակումը արագացնելու» և Պարիզյան Կոմունայի ու 1905 թ. հեղափոխության վարդով հեղաշրջում կատարելու համար։

ԱԵՆԻՆԸ մատնանշեց Բաղելի կոնգրեսի այդ բանաձևի վրա,
վորին II Խնտերնացիոնալը դափանանշ՝ պատերազմի ժամանակ
ակտիվ կերպով անցնելով կմպերիալիզմի կողմը:

Լէնինի հայացքները, վոր նա հայտնել եր շվեցարական կոնֆերենցիաներում, կատաղի դիմադրության հանդիպեցին թե բացարձակ ոպորտունիստների և թե ցենտրիստների ու կիսացենտրիստների կողմից, վորոնք հեղափոխական փռազների ծածկութիւ տակ մերժեցին Լէնինի հետևողական պոզիցիան:

Կանանց միջազգային կոնֆերենցիան. — Առաջին միջազգային կոնֆերենցիան, վորը կանգնեց պատերազմի դեմ անհրաժեշտուրեն պայքարելու դրոշակի տակ, դա կանանց միջազգային կոնֆերենցիան եր 1915 թ. ապրիլին: Կոնֆերենցիան տեղի ունեցավ ՌՍԴԲԿ (բ) Կենտրոնական Կոմիտեյի և ընկ. Կլարա Ցետկինի նախաձեռնությամբ: Նրանում մասնակցում եցին Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Սկանդինավյան յերկրների և Շվեյցարիայի ներկայացուցիչները: Կոնֆերենցիայի մեծամասնությունը կողմնակից եր պայքարել պատերազմի դեմ, բայց նա մերժեց լինինյան հետևողական տեսակետը, վոր պաշտպանում եցին ընկ. Կրուպսկայան և ընկ. Իննեսա Արմանդ: Խոսելով կանանց կոնֆերենցիայի արդյունքների մասին,

Լենինը «Սոցիալ-շովինիստների դեմ մղվող պայքարի մասին» իր հոդվածում հետեւալ կերպով ե բնորոշում այն բանաձևը, վոր ընդունել եր մեծամասնությունը. — «Վահան մի խոսքով չեն դատապարտվում դավաճանները, վահան մի խոսք չի ասված ոպորտունիզմի մասին, — Բազելյան բանաձևի իդեյաների հասարակ կըրկնություն!!! Կարծես վոչ մի լուրջ բան չի պատահել, — տեղի յեռնեցել պատահական մի փոքրիկ սխալ և բավական և միայն կրկնել հին վորոշումը, — առաջացել ե վոչ - սկզբունքային վոչ - խորը տարածայնություն, բավական և միայն հարթել դա!!! Բայց չե վոր դա ուղղակի ծաղը և Ինտերնացիոնալի վորոշումների նկատմամբ, ծաղը և բանվորների հասցեյին»: Հիշենք, վոր կանանց այդ կոնֆերենցիան ընդունեց պատերազմի դեմ ուղղված մի մանիֆեստ:

Յերիտասարդուրյան միջազգային կոնֆերենցիան. — Մի քայլ առաջ գնաց յերիտասարդության միջազգային կոնֆերենցիան, վորը կայացավ նոյենպես 1915 թ. ապրիլին, Իերն քաղաքում (Շվեյցարիա): Այդ կոնֆերենցիայի կազմակերպողն ու զեկավարն եր Վիլի Մյունցենբերգ: Կոնֆերենցիայում տիրում եր Կարլ Լիբքնեխտի աղմկող վոգին: Կոնֆերենցիաների բանաձևը վկայում են նրա հեղափոխական-ինտերնացիոնալիստական վոգին: Սակայն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լողունքը չընդունվեց նաև այստեղ: Բայց և այսպես, յերիտասարդության այդ կոնֆերենցիան պատմական մեջ նշանակություն ունի. — Նա վորոշեց ամեն տարի անցկացնել Յերիտասարդության Միջազգային Որ՝ վորպես պատերազմի դեմ պայքարելու որ, հիմնեց «Յերիտասարդության Ինտերնացիոնալ» որգանը, վորին հետագայում աշխատակցեց նաև Լենինը: Յերիտասարդության Բերնի կոնֆերենցիան իրենից ներկայացնում և առաջին քայլը՝ կոմունիստական Յերիտասարդության Ինտերնացիոնալի ստեղծման խնդրում:

«Դանդաղ ե ընթանում — ասում ե Լենինը, — սոցիալիստական ինտերնացիոնալ շարժման զարգացումը՝ պատերազմի հետևանքով առաջացած անշափի ծանր կրիզիսի եպոխայում: Բայց և այնպես նա ընթանում է հենց ոպրորտունիզմի ու սոցիալ-շովինիզմի հետ կապելու խզելու ուղղությամբ: Միջազգային սոցիալիստական կոնֆերենցիան Յիմմերվալդում (Շվեյցարիա) 1915 թ.

սեպտեմբեր 5—8, — դա պարզ կերպով ցույց տվեց» («Социал-демократ», № 45—46, 11/X 1915, «Первый шаг»):

Ցիմմերվալդի առաջին կոնֆերենցիան. — Խոալական և շվեյցարական սոցիալիստների նախաձեռնությամբ կոնֆերենցիային հրավիրվեցին այն բոլոր ինտերնացիոնալիստները, վորոնք համաձայն չելին սոցիալ-պատրիոտների հետ և պրոպագանդ ելին անում քաղաքացիական պայքար մղել ընդդեմ պատերազմի: Լենինը և բոյլշեվիները այն կարծիքին եյին, վոր պետք և հավաքել միայն ամենահետևողական և հեղափոխական ինտերնացիոնալիստներին, այնպիսի ինտերնացիոնալիստներին, վորոնք կողմանից եյին իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու լողունգին: Յել սակայն, կոնֆերենցիան հավաքվեց վերև հիշված հիմունքներով: Նրանում շուտով յերեան յեկան յերկու ուղղություններ: Մեծամասնությունը գտնվում եր Լեռերուրի (Գերմանիա) և Մարտովի (ոռուս մենշևիկ) ղեկավարության տակ: Այդ մեծամասնությունը իրեն հայտարարեց ինտերնացիոնալիստական, դատապարտեց սոցիալիստների տակտիկան և անհրաժեշտ համարեց դասակարգային պայքար մղել նաև պատերազմի ժամանակի: Սակայն նա մերժեց Լենինի առաջարկը դասակարգային պայքարի սրման անհրաժեշտության մասին, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լողունգի հայտարարման մասին, պրոլետարական հեղափոխության մասին, պրոլետարական լայն մասսաների առաջ սոց. - դեմ. պարագլուխների դավաճանությունները անխնա մերկացնելու մասին, այդ պարագլուխների հետ կապելը կարելու անհրաժեշտության և նոր, III ինտերնացիոնալ հիմնելու մասին:

Ցիմմերվալդի կոնֆերենցիայի ձախ մասը Լենինի ղեկավարությամբ մասնակցեց աշխատանքներին, չնայած իր՝ ղեպի մեծամասնությունը բռնած բացասական դիրքին, և ստորագրեց մանիֆեստը, վորովհետև դա (մանիֆեստը), Լենինի արտահայտությամբ, նշանակում եր՝ «մի քայլ առաջ»: Սակայն միաժամանակ, ձախերը պայքար սկսեցին մեծամասնության դեմ, վորովհետև վերջինս պատրաստ եր ոպրորտունիստների հետ դաշն կնքելու: «Կոնֆերենցիայի միջազգային հեղափոխության - մարքսիստական մասը» (այդպես ե կոչում Լենինը ցիմմերվալդիան ձախերին) կոնֆերենցիայում բացարձակ արտահայտեց իր տե-

սակեռը մեծամասնության մասին: Լենինը ցուցում ե անում այն մասին, վոր մեծամասնության վոգով գրված մասնիքեստը հայտարարում ե, թե անհրաժեշտ ե «արթն ացնել հեղափոխական վոգին» և... ուղղակի, բացարձակ, վորոշակի վոչինչ չի ասում պայքարի հեղափոխական միջոցների մասին (ԼԵՀԻԱ, «Первый шаг»):

Այդ հոդվածում լենինը գալիս ե այն յեզրակայության, վոր ծիմերվալդի կոնֆերենցիան նշանակում ե՝ մի քայլ առաջ և տանում ե գեղի իդեոլոգիական ու պրակտիկ կապերի խզումը ոպորտունիզմի ու սոցիալ-շովինիզմի հետ: Միաժամանակ նա հարվածում ե մանիքեստի անհետողականությունը: Կոնֆերենցիայի ձախ մասի բանաձեկի պրոյեկտը կոնֆերենցիան մերժեց 19 ձայնով ընդում 12, սակայն կոնֆերենցիայից հետո այդ պրոյեկտը դարձավ ձախերի հետագա աշխատանքի հիմքը: Շուտով, ծիմերվալդի կոնֆերենցիայից հետո, ձախերը սկսեցին հրատարակել «Փորբուժեալ ժուկովի և «Կոմունիստը» ոռուերեն լեզվով, միաժամանակ ամրացնելով իրենց ազգեցությունը բոլոր յերկրներում:

Ծիմերվալդի կոնֆերենցիայի ձախ մասը հանդիսանում ե III ինտերնացիոնալի առաջին բջիջը: Ճանապարհը այդ բջիջից մինչև Կոմինտերն, իրենից ներկայացնում ե՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու անդադար պայքարի ճանապարհ, դավաճաններին հետզետե ավելի ու ավելի անինա մերկացնելու և նոր ինտերնացիոնալի ստեղծման իդեաները ավելի ու ավելի տարածելու պայքարի ճանապարհ:

Յիմերվալդի II կոնֆերենցիան. — Այդ ճանապարհին բնորոշ ետապ ե հանդիսանում Կինտալի կոնֆերենցիան (կամ Ծիմերվալդի II կոնֆերենցիան): Այս կոնֆերենցիայում ձախերը արդեն ավելի ուժեղ են, — նրանք կազմում են կոնֆերենցիայի մոտավորապես կեսը: Այստեղ ևս ներկայացվում են «յերկու տեսակետ, յերկու տակտիկա», ինչպես զրում ե ընկ. Զինովյելը «Ծիմերվալդ-Կինտալ» իր հոդվածում. — «Վոմանք կարծում են, վոր II ինտերնացիոնալը կործանվեց և վոր համաշխարհային պատերազմի խարույշի մեջ կոփվում են ոպորտունիզմից ու նացիոնալիզմից զերծ III ինտերնացիոնալի համար նախապայմանները: Մյուսները չեն հասկանում վոչ պատերազմի բնույթը և վոչ ել

տիրող կրիպիսի բնույթը» («Против течения», — ժողովածու): Սակայն Կինտալի կոնֆերենցիայում հարաբերական մեծամասնությունը արդեն ձախերի կողմն եր:

«1914—1918 թ.թ. պատերազմը, — ասում ե Կոմինտերնի ծրագիրը, — առաջացրեց նոր, հեղափոխական ինտերնացիոնալի ստեղծման առաջին փորձերը, Կոմունիստական ինտերնացիոնալի, վորպես հակակիռ սոցիալ-շովինիստական II ինտերնացիոնալին և վորպես զենք՝ սաղմատենչ իմպերիալիզմին (Ցիմերվալդ, Կինտալ) զիմազրելու համար: Պրոլետարիատի հաղթական հեղափոխությունը Ռուսաստանում, խթան հանդիսացավ կոմունիստական կազմելուն կապիտալիզմի կենտրոններում և գաղութներում: 1919 թ. հիմնվեց Կոմունիստական ինտերնացիոնալը»:

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՏԱԲՆ Ե

«Բանվորական խորհուրդների գրոշի տակ, իշխանության և պրոլետարական դեկտատորայի համար մղվող հեղափոխական պայքարի ու III ինտերնացիոնալի գրոշի տակ, — պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»:

Հոկտեմբերյան հեղափոխուրյունը — համաշխարհային հեղափոխուրյան ազգարարն ե. — «Մեր կուսակցությունը վոչ թե պետք ե սպասի, այլ անմիջապես պետք ե հիմնի III ինտերնացիոնալ...», — գրում ե Լենինը 1917 թ. ապրիլի 10-ին՝ «Պրոլետարիատի անելիքները մեր հեղափոխության մեջ» բրոշյուրում: Համաշխարհային կապիտալիզմի հսկայական ցնցումը, գասակարգային պայքարի սրումը և հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխության անմիջական ազգեցությունը հեղափոխական հիմքեր ստեղծեցին Կոմունիստական ինտերնացիոնալի կազմակերպման համար: Իմպերիալիստական ֆրոնտը պատովեց իր ավելի թույլ կետում, իմպերիալիստական պատերազմը Ռուսաստանում վերածվեց քաղաքացիականի և այդ քաղաքացիական պատերազմի հասցում հաղթանակեց պրոլետարական հեղափոխությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը «մարդկային պատմության մեջ առաջին անգամ, ստեղծեց և ամրապնդեց պրոլետարիատի գիշ-

տատուրան, կենսագործեց պետության նոր, խորհրդային տիպը և սկիզբը դրեց պրոլետարիատի միջազգային հեղափոխության» (Կոմիտասերնի ծրագրից):

III Ինտերնացիոնալի հիմնական խնդիրն եւ — «կենսագործել, կյանքում անցկացնել մարքսիզմի պատգամները և իրականացնել սոցիալիզմի ու բանվոր դաստկարգի շարժման դարձման դարավոր իդեալները» III Ինտերնացիոնալի այդ բնորոշ գիծը իսկույն հայտնաբերվեց նրանով, վոր նոր, յերրորդ ռազմական միջազգային ընկերությունը սկսել ե այժմ վորոշ չափով արդեն զուգագիտվել խորհրդային սոցիալիստական հանրապետությունների Միության հետ» (Լենին, III Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ), III Ինտերնացիոնալի ստեղծումը կանգնեց պրոլետարական դիկտուրայի նշանի տակ և հենվեց պրոլետարական առաջին հաղթական հեղափոխության վրա Խորհրդային Ռուսաստանում:

Լենինը և բոյլեիկյան կուսակցությունը հետեղականորեն ձգտում եին անմիջապես ստեղծել Կոմունիստական Ինտերնացիոնալը: 1919 թ. հունվարի 24-ին բոյլեիկյան կուսակցության կենտրոնը մի շարք ուրիշ կուսակցությունների հետ միասին հրատարակում ե մի կոչ, վորի մեջ շեշտվում ե նոր ինտերնացիոնալի կողմանակիցների կոնգրես գումարելու անհրաժեշտությունը:

Արագ աճում ե համակրանքը դեպի Ռուսաստանում տեղի ունեցած պրոլետարական հեղափոխությունը, ինչպես նաև արագ աճում ե հետաքրքրությունը դեպի բոյլեիկյան Պոլտատարական հաղթական հեղափոխության, կապիտալիզմի յետպատերազմյան խորը կրիզիսի և դասակարգային պայքարի սրման ազդեցության տակ, մի շարք կապիտալիստական յերկրներում բոլոր սոցիալիստական կուսակցությունների հեղափոխական տարրերը սկսեցին ազատվել տատանումներից ու համախմբվել Լենինի ու նրա կուսակցության շուրջը: Մյուս կողմից, II Ինտերնացիոնալի հերոսները Բերնի կոնֆերենցիայում փորձ արին կենդանացնել II Ինտերնացիոնալի նեխվող դիմուլը: Այդ բոլորն արագացրեց, վոր պարզ վերաբերմունք ստեղծվի հեղափոխական տարրերի դիմուլը:

Ութը կազմակերպությունների կոչը հբավիրում ե այն կուսակցությունների, խմբերի և ուղղությունների ներկայացուցիչ-

ներին, վորոնք պատերազմի և II Ինտերնացիոնալի կրիզիսի հետեւանքով իրենց հայտարարել եյին պրոլետարական հեղափոխության և III Ինտերնացիոնալ կազմակերպելու կողմանակիցները: Այդ կոչը կենդանի արձագանք գտավ բանվորական շարժման բոլոր կոմունիստական տարրերի կողմից:

Կոմիտենի կոնգրեսը — 1919 թ. մարտի 4-ին Մոսկվայում տեղի ունեցավ Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադիր կոնգրեսը: Այդ կոնգրեսում, բացի Ռուսկոմիուսից, ներկայացված եյին Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը (վոր ծագել եր «Սպարտակ» միությունից), Ավստրիայի կոմունիստական կուսակցությունը, Վենգրիայի կոմունիստական կուսակցությունը, Շվեյցարիայի և Նորվեգիայի սոցիալ-դեմոկրատիայի ձախ շրջանները, Ամերիկյան սոցիալիստական բանվորական կուսակցությունը, Բալկանյան հեղափոխական ֆեդերացիան, Լեհաստանի, Ֆինլանդիայի, Լիտվայի, Լատվիայի և Եստոնիայի կոմունիստական կուսակցությունները, Շվեյցարիայի սոցիալիստական կուսակցության ոպպոզիցիոն շրջանները և մի շարք ուրիշ խմբակներ, նույն թվում նաև Ցիմմերվալդի ձախերից մի ներկայացուցիչ՝ Ֆրանսիայից:

Կոնգրեսի նախնական խորհրդակցություններում վորոշվում ե մերժել գերմանական կոմունիստաների ներկայացուցիչ առաջարկն Ինտերնացիոնալի ստեղծումը հետաձգելու մասին և դռնացը կոնգրեսը՝ իբրև Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադիր կոնգրես: Զանազան յերկրների ներկայացուցիչների դեկույցները լսելուց հետո կոնգրեսն անցնում է Կոմունիստական Ինտերնացիոնալի պլատֆորմի մշակմանը:

Այդ պլատֆորմը իմակերխալիստական արյունահեղ պատերազմը համարում է ժամանակակից կապիտալիզմի խորը հակասությունների անխուսափելի հետեւանքը: Այնուհետև պլատֆորմը մատնանշում է, վոր յետպատերազմյան կրիզիս առաջ ե բերել մի շարք կուպող յերկրներում (Գերմանիա, Բավարիա, Ավստրիա, Ֆինլանդիա, Վենգրիա) մասսայական հեղափոխական շարժում, վորին դավաճանել են սոցիալ-դեմոկրատաները և վորին արյան մեջ խեղդել են ովկիցերջինայի գաղաղած բանդաները: «Իմակերխալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու» լոգունդն իրականացված և Ռուսաստանում, վորական պրոլետարական հեղափոխության հաղթանակն առաջին անդամ բանվոր դաստ-

կարգին կանգնեցրել և իշխանության գլուխ և դրանով նոր եջ ե
բաց արել մարդկային պատմության մեջ։ Քաղաքական իշխա-
նության նվաճումն որվա հարց և գարձել բոլոր յերկրների պրո-
լետարիատի համար։ Կապիտալիզմը վերջնականապես հաղթելը
կարող և ապահովել միայն պրոլետարական դիկտատուրայի սահ-
մանումը։ Մերձակա շրջանում պրոլետարիատի նպատակը հան-
դիսանում են բուրժուազիայի իշխանության տապալումը և խոր-
հրդային իշխանության սահմանումը։ Պայքարի միջոցներ հան-
դիսանում են մասսայական պայքարի բոլոր տեսակները, մինչև
իսկ նրա ամենաբարձր ձևը — զինված ապատամբությունը։

Կոնգրեսում հիմնական պրոլեմը հանդիսանում էր «բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարական դիկտուրայի» հարցի քննությունը: Խմզերիսալիստական պատերազմների և պրոլետարական հեղափոխությունների եպոխայում, վորպես դաստիարակյան գերիշխանության ձև, հնարավոր ե միայն դիկտուրա — բուրժուազիայի դիկտուրա կամ պրոլետարիատի դիկտուրա: Ուրիշ ճանապարհ չկա: Բուրժուազիան և սոցիալ-դաշտանաները դեմոկրատիան դարձրել են պայքարի ղենք՝ ընդդեմ՝ բանվոր գասակարգի ազատագրման, դարձրել են բուրժուազիայի խախուտ գերիշխանության հականեղափոխական հենարան: Պրոլետարիատի դիկտուրան՝ խորհրդային իշխանության ձևով, աշխատավորական ամենալայն մասսաներին հակայական հնարավորություններ ե տալիս հայտնաբերելու հասարակական և քաղաքական լայն գործնեյցություն: Հենց դրանով ել պրոլետարիատի այդ դիկտուրան իրենից ներկայացնում ե ամենահետևողական պրոլետարական դեմոկրատիա:

Յերեք հոսանք Ա Ենթենացիոնալում՝ մինչ-հեղափոխուրյան շրջանում. — Կոմիստերնի Ա կոնգրեսը, ցիմմերվալդյան ձախերի հայտարարության հիման վրա, վորոշեց ցիմմերվալդյան միացումը լուծված համարել:

Քննելով Ա Խնտերնացիոնալի աշխուժացման ճիգն ու փորձը, կոնդրեսը մի հատուկ բանաձևում քննում է Ա Խնտերնացիոնալում գտնվող հոսանքները մինչև պատերազմը և պատերազմի ժամանակ, և գտնում ե, փոր նրա մեջ կան յերեք գլխավոր հոսանքներ։ Առաջին հոսանքը — սոցիալ-շովինիստական հոսանքն ե, Այդ հոսանքի տիպիկ ներկայացույինները

հանդիսանում են գերմանական սոցիալ-դեմոկրատները, վորոնք
գերմանական բուրժուազիայի հետ բաժանել են իշխանությունը
և «գլարձել են Կոմունիստական Խոտերնացիոնալի ղեկավարների՝
Կարլ Լիբքնեխտի և Ռոզա Լյուքսեմբուրգի սպանիչները»։ Սո-
ցիալ-շողինիստները հանդիսանում են պըռոլետարիատի դա-
սակարգային թշնամիները։

Յերկրորդ հոսանքը — դա այսպես կոչված ցենտրի և տական հոսանքն է, վորի գաղափարական ներշնչողը հանդիսանում է Կարլ Կառլցին։ Բանաձևը տալիս է սոցիալ-դեմոկրատիայի կառաջիկական թերթ զարգացումը կարծեցյալ ուղղողիցիայից դեպի լիակատար կապիտուլյացիան՝ սոցիալ-շովիստների առաջ։

Յերբորդ հոսանքը—կոմունիստականն է: Այդ հոսանքը
II Խնտերնացիոնալում պաշտպանում եր կոմունիստական-մարք-
սիստական հայացքները պատերազմի վրա: Զախ ռադիկալների
խմբակը (հետագայում «Սպարակ» խմբակը) Գերմանիայում,
բոյլշևիկների կուսակցությունը Ռուսաստանում, Յերիտասարդու-
թյան Խնտերնացիոնալի ձախ թեր մի շարք յերկրներում III Խն-
տերնացիոնալի առաջին կորիզը կազմեցին:

Կոմինեւրնի Ա կոնցրեսի մանիթեսը. — Առաջին կոնզրեսի մանիթեստն ընդգծում ե բանվորական շարժման և սոցիալիզմի զարգացման գլխավոր մոմենտները՝ սկսած Մարքսի և Ենգելսի հիմնած Ի Խոտերնացիոնալից, Ա Խոտերնացիոնալի զարգացումից և անկումից մինչև Կոմինտերնի կազմակերպման մոմենտը: Կոմունիստական Խոտերնացիոնալն իրեն նպատակ է դնում միացնել բոլոր յերկրների պրոլետարիատի իսկական հեղափոխական բովանդակութերը՝ բուրժուազիային տապալելու և պրոլետարիական դիլտատուրա սահմանելու համար: Վորպես ամենամոտիկ նպատակ՝ մանիթեստը մատնանշում է գոյություն ունեցող կոմկուսների ամրացումը և բոլոր յերկրներում նորերի կազմակերպումը, կապերի լիակատար խզումը ուղղութեանիզմի հետ և անհաշտ պայքար նրա դեմ, Արևմուտքի զարգացած յերկրների պրոլետարիատի և Արևելքի ձնշված ժողովուրդների մերձացումը պրոլետարիատի պայքարի և գյուղացիության պայքարի միացումը, գործոն ոգնություն՝ աշխարհում առաջին պրոլետարական պետությանը — Խորհրդային Ռուսաստանին:

Կոմինտերնի Ա կոնգրեսի համաշխարհային նշանակություն ունեցող կոչը բարենպաստ հոդեգում:

Յետպատերազման հեղափոխական շարժումը Արեվմուտքում — Առաջին կոնգրեսից հետո սկսվեց Կոմինտերնի իդեոլոգիական և կազմակերպչական աճումը: Յետպատերազման առաջին տարիները կապիտալիզմի խորը կրիզիսի շրջան եր, վոր հայտնի դարձավ մի շարք հեղափոխություններով և հեղափոխական յեղույթներով: Կոմինտերնի գոյության առաջին շրջանում — նրա I կոնգրեսից մինչև II-ը, տեղի յեն ունենում՝ պրոլետարական հեղափոխությունը Վենգրիայում, խորհրդային իշխանությունը Բավարիայում և բուրժուական-աղքային հեղափոխությունը Թուրքիայում: Կոմունիստական Խնտերնացիոնալի առաջին քայլերը գուգաղիպվում են հեղափոխական հեղաշրջման առաջին փորձերի հետ, «վորոնք աճել ելին կապիտալիզմի՝ 1918—1921 թթ. սուր կրիզիսի հիման վրա» (Կոմինտերնի ծրագրից): Այդ առաջին փորձերը «վերջացան պրոլետարական գիկտառաւրայի հաղթանակով և ամրապնդումով՝ ԽՍՀ Միության մեջ, և պրոլետարիատի պարտությամբ՝ մի շարք ուրիշ յերկրներում»: Խնչու այդ առաջին փորձերում Կոմինտերնը չկարողացավ հասնել նույն արդյունքներին, վորոնց հասավ նրա հիմնարերը՝ Ռուսաստանի բոյլշևիզման կուսակցությունը: Կոմինտերնի ծրագիրն այդ հարցին տալիս և պարզ և ուղղակի պատասխան:

Հեղափոխուրյան պարտությունն Արեվմուտքում՝ սոցիալ-դեմոկրատների խայտառակ դավանանուրյան հետելանին ե. — «Այդ պարտությունները հանդիսանում են, առաջին հերթին, սոցիալ-դեմոկրատ առաջնորդների և արհեստակցական շարժման ռեֆորմիստական պարագլուխների գավաճանական տակտիկայի հետևանք, ինչպես նաև հետեւանք այն հանգամանքի, վոր բանվոր գասակարգի մեծամասնությունը տակավին կոմունիստների կողմը չեր և մի շարք կարեռագույն յերկրներում ընդհանրապես դեռ գոյություն չունեցին կոմունիստական կուսակցություններ»:

Չնայած այդ պարտություններին, Կոմինտերնը արդեն իր գոյության առաջին տարիներում աճում և ծավալվում է հոկայտական քայլերով: Կոմունիստական նոր Խնտերնացիոնալի կազմակերպման լուրը, Արևմուտքի սոցիալիստական կուսակցություն-


ներում սրում և ներկուսակցական պայքարը, առաջ և բերում մի շարք պառակտումներ և իրարից անջատ կոմունիստական կազմակերպություններն ու խմբակները միանում են Կոմինտերնին:

Կոմինտերնի II կոնգրեսը. — Կոմինտերնի II կոնգրեսի աշխատանքներին, վոր Մոսկվայում սկսվեց 1920 թ. հունիսի 19-ին, արդեն մասնակցում են 35 յերկրների 64 կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: II կոնգրեսի պահին Կարմիր բանակի հաղթանակները, կոմինիզմի արագ հաջողություններն Արևմուտքի բանվորական շարժման մեջ և հեղափոխական շարժման աճումը Արևելքում, Կոմինտերնի համար հըսկայական ժողովրդականություն են ստեղծում: Կոմինտերնի ժողովրդականության այդ արագ աճումն եր, վոր վտանգ առաջ բերեց — նրա շարքերում կարող ելին խցկվել անցանկալի և նույնիսկ թշնամի տարրեր: Կոմինտերնի II կոնգրեսի պատմական խնդիրն այն եր, վորպեսզի հայտնի «Ձև պայմանները» ստեղծելու միջոցով, Կոմինտերնի մուտքը փակի սկզբունքորեն անկայուն, յերերվող խոռօքով հեղափոխական և գործով մենշևիկյան, վոչ-կոմունիստական տարրերի առաջ:

Գերմանիայի անկախ ս.՝ գ. կուսակցության ցենտրիստների և ֆրանսիական սոցիալիստական կուսակցության ձախերի ներկայացուցիչները կոնգրեսում հայտարարում են, վոր մի շարք հարցերում իրենք համաձայն են Կոմինտերնի հետ. և սակայն նրանք հայտնաբերեցին հեղափոխական եպօխայի լիակատար անհամարցողություն, պահանջելով ընդունելության ավելի մեղմ պայմաններ, ինչպես նաև ավելի շատ ազատություն՝ առանձին ազգային հատվածների համար: Կոնգրեսում յերեան և գալիս նաև մի ուրիշ «ձախ» հոսանք: Այդ ուղղության ներկայացուցիչը Գերմանիայի կոմունիստական բանվորական կուսակցությունն եր, ինչպես նաև իտալական և հոլանդական կոմունիստների մի մասը: Այդ ուղղությունը յերկրոպական յերկրներում հանուն խորհրդային իշխանության մղվող պայքարը պատկերացնում եր բացառապես զինված ազստամբության ձևով: Նա մերժում եր պրոֆմիություններում մասսաներ զրավելու համար մղվող պայքարը, բուրժուական պարլամենտներին մասնակցելը և լեզաւ հնարավորությունների ոգտագործումը, համարելով մինչ միտվածքներ եպօխան պահանջում և լիակատար հրաժարություն պայքարի սկզբ հին մեթոդներից»:

Ա. Մակար

2-353



17

1924-91

Պայմար աջ լեռ ձախ թեքումների դեմ. — Բոյլզկիկյան կուսակցության փորձի հիման վրա կոնգրեսը հիմնական կրակը դարձնում է դեպի աջ, ընդգծելով, վոր միաժամանակ անհրաժեշտ և պայքարել «ձախ» թեքումների դեմ ևս: Լենինն իր „«Զախուռթյան» մանկական հիմնադրությունը կոմունիզմի մեջ“ բրոցուրում ցույց է տալիս, վոր բոյլզելիզմ աճել ամրացել և կոփել և առաջին հերթին և գլխավորապես ոպորտունիզմի դեմ մղվող պայքարի մեջ: Հիշյալ բրոցուրում Լենինը գրում է, վոր «դա գլխավոր թշնամին և (ոպորտունիզմը) միջազգային մասշտաբով: Այդ թշնամու վրա բոյլզելիզմը դարձրել է և դարձնում է ամենից շատ ուշադրություն»: Բոյլզկիկյան կուսակցության փորձի հիման վրա Լենինը վերլուծում է և ձախ թեքումը և դա բնութագրում է հետևյալ կերպով:

«Կապիտալիզմի սարսափներից «կատաղած» մանր բուրժուան — դա սոցիալական մի յերեսութե, վոր հատուկ ե, ինչպես և անարխիզմը, բոլոր կապիտալիստական յերկրներին», Լենինը մտրակում է «այդպիսի հեղափոխականության անկայունությունը»: Չախերի «սկզբունքորեն» հրաժարվելը կոմպրոմիսից — «յերեխայություն» եւ: Այնուհետև, — բացատրում ե նա, — «կոմպրոմիս ել կա, կոմպրոմիս ել. պետք ե զիտենալ տարբերել. պետք ե կարողանալ անալիզի յենթարկել յուրաքանչյուր կոմպրոմիսի հիմքերը և կոնկրետ պայմանները կամ կոմպրոմիսների յուրաքանչյուր այլաձնությունը»:

Համաշխարհային II կոնգրեսի վորոշումը կոմունիստական կուսակցության հեղափոխական դերի և կազմակերպչական կառուցվածքի մասին մինչ իշխանության նվաճումը և նվաճումից հետո՝ հիմնավորում է կոմինտերնի պողիցիան «ձախ» և աջ թեքումների դեմ:

Ազգային-գաղութային հարցը. — Ակզեռոնքային նշանակություն ունի նաև ազգային հարցի քննումը կոմինտերնի II կոնգրեսի կողմից: Լենինի թեղիսների հիման վրա գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը համաշխարհային II կոնգրեսի վորոշումներում բնորոշվում է վորպես կապիտալիստական զարգացման անխուսափելի հետեանք և վորպես ծավալվող պրոլետարական հեղափոխության անխուսափելի ելեմենտ:

Գյուղացիական հարցը. — Լենինի թեղիսների հիման վրա կոնգրեսը մատնանշում է, վոր ազգային և գյուղացիան հարցություն ունի անխզելի կապ: Ինչպես առանձին յերկրներում բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հիմնական մասսայի հետ կազմում է պղողետարիտիտի հաղթանակի և նրա դիկտատուրայի ամրապնդման նախապայմանը, այնպես ել պղողետարիտիտի համաշխարհային հաղթանակը պահանջում է, վոր Սրեմուտքի առաջավոր բանվորական մասսաների պայքարը միացվի Սրեկելքի ճնշված ազգությունների պայքարին:

Պառլամենտարիզմի մասին. — Բուրժուական պառլամենտարիզմի ոգտագործման հարցի քննությունը համաշխարհային II կոնգրեսում, հսկայական նշանակություն ունի կոմունիստական կուսակցությունների հետազա ամբողջ հեղափոխական գործնեյության համար: Կոնգրեսը մերկացրեց II ինտերնացիոնալի կուսակցությունների ոպորտունիստական պառլամենտարիզմը և հրահանգեց, թե պարլամենտն ու բուրժուական գեմոկրատիայի ուրիշ ձևերը ինչպես պետք ե հեղափոխական կերպով ոգտագործել՝ մասսաների վրա կոմունիստական ազգեցությունը ամրացնելու նպատակով: Անհրաժեշտ ե, վոր բոլոր կոմունիստական կուսակցությունները մասնակցեն բուրժուական պառլամենտարիզմին այն բոլոր յերկրներում, վորտեղ տակավին խորհրդային իշխանություն ձեռք չի բերված:

Պրոֆմինիությունների հարցը. — Յերկրորդ կոնգրեսը վոչ պակաս ուշադրություն դարձրեց նաև պրոֆմինիությունների հարցի վրա: Պրոֆմինիությունների մեջ աշխատանք տանելը — դա բոլոր կոմունիստական կուսակցությունների հերթական ամենազլիսավոր խնդիրն է կազմում: Կոմունիստական կուսակցության համար իշխանության գրավումը հնարավոր ե միայն աշխատավորության ամենալայն մասսաների, և առաջին հերթին քաղաքի՝ պրոֆմինիություններում կազմակերպված պղողետարիտիտի ամենազործոն մասնակցության հիման վրա:

Պրոֆմինիությունների կազմակերպումը. — Կոմինտերնի II կոնգրեսից անմիջապես հետո Մոսկվայում հիմնվում է Պրոֆմինիությունների

Կարմիր ինտերնացիոնալ: Համաշխարհային Ա կոնգրեսի կոչը մերկացնում է Պրոֆմիությունների Ամստերդամի ինտերնացիոնալի դավաճանական գերը և կոչ և անում մտնել Պրոֆմիությունների Կարմիր ինտերնացիոնալի մեջ:

Ա կոնգրեսի վորոշումները վիթխարի նշանակություն ունեն Կոմիտերնի ամբողջ տասնամյա պայքարի և նրա զարգացման ամբողջ ապագա շրջանի համար: Այդ վորոշումները իրքու ուղեցույց հանդիսացան Ա կոնգրեսին հաջորդող տարիների ընթացքում մղած պայքարի, իսկ նրանց սկզբունքային հիմքերը մտան նաև կոմունիստական ինտերնացիոնալի ծրագրի մեջ:

Ա Կոնգրեսի վորոշումների նույնականությունը հեղափոխական շարժման հետագա զարգացման համար. — Ա համաշխարհային կոնգրեսի վորոշումները արագացրին լավագույն յեղափոխական տարրերի միավորման պրոցեսը Կոմունիստական ինտերնացիոնալում: Մեկը մյուսի յետերից գոյանում են կոմունիստական կուսակցություններ Անդիմայում, Ամերիկայում, Իտալիայում (Հորիզիվ սոցիալիստական կուսակցության պառակտման), Չեխով Սլովակիայում, Բոլգարիայում, Ֆրանսիայում: Գերմանիայում անկախ սոցիալ-դեմոկրատիայի պառակտման հետևանքով ամրապնդվում ե կոմունիստական կուսակցությունը: ԽՍՀՄ մեջ գումարած Արևելքի ազգությունների համագումարը հարում է Ա կոնգրեսի վորոշումներին: Կոմունիստական կուսակցությունը սկսում ե կազմակերպվել Յապոնիայում, Նմանապես և Ռումինիայում, Զինաստանում, Տաճկաստանում և ուրիշ յերկրներում:

Կապիտալիզմի նախապատերազմյան սուր կրիզիսը սկսում է աստիճանաբար հանգել: Կապիտալիզմը, շնորհիվ դավաճան ոոց-դեմոկրատիայի, թեև դանդաղ, բայց դուրս եր գալիս այդ կրիզիսից: «Հիմք ունենալով... պրոլետարիատի պարտությունները, վորոնք հնարավորություն ստեղծեցին պրոլետարական մասսաների և գաղութային ազգությունների ծայրահեղ շահագործման համար, հիմք ունենալով նրանց կենսական մակերևույթի անզուսպ անկումը, բուրժուազիան հասավ կապիտալիստական հարաբերությունների մասնակի ստարիլիզացիային» (Կոմինտերնի ծրագիրը):

Սակայն, չնայած մի շաբաթ ծանր պարտությունների, Կոմինտերնը շարունակում եր աճել և զարգանալ, հետզհետե զառնաւով համաշխարհային կոմունիստական կոմիտեի մեջ հաշվի առավ համ-

թյուն, վորը չնայած ահարկու հալածանքներին և առանձին տարրերի դավաճանության, շարունակում եր ամրացնել իր շարքերը:

ԿԱՐԻՏԱԼԻԶՄԻ ԱՏԱԲԻԼԻՑԱՑԻԱՆ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՀԱՄԱԴԻՎԱՅՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

«Իմպերիալիզմը... ն ե խ վ ո դ և մ ե ռ ն ո դ կ ա պ ի տ ա լ ի զ մ ե: Ն ա կ ա պ ի ա լ ի ս տ ա կ ա ն զ ա ր գ ա ց մ ա ն վ ե ր ջ ի ն ե տ ա վ ա ն ե: Ն ա մ ա շ շ ս ա ր հ ա յ ի ն ս ո ց ի ա լ ի ս տ ա կ ա ն հ ե ղ ա փ ո խ ո ւ թ յ ա ն ն ա խ ո ր յ ա կ ն ե ա (Կոմինտերնի ծրագրից), Կ ա պ ի ս տ ա լ ի ս տ ա կ ա ն ս ի ս տ ե մ ի հ ա ր ա տ ե կ ը ն դ հ ա ն ո ւ ր կ ր ի զ ի ս ի շ ր ջ ա ն ո ւ մ կ ո մ ու ն ի ս տ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ու թ յ ո ւ ն ը պ ե տ ք և ի ր ա գ ո ր ծ ի ի ր պ ա տ մ ա կ ա ն խ ն դ ի ր ը — գ ր ա վ ի պ ե տ ա կ ա ն ի շ ա ն ո ւ թ յ ո ւ ն ը և հ ա ս տ ա տ ի պ ր ո լ ե տ ա ր ա կ ա ն դ ի շ ա տ ու թ յ ա ն ս տ ր ա տ ե գ ի ս տ ա կ ա ն ն ա խ ա գ ր յ ա լ ն ե ր ը: Ն ա խ ի և ա ռ ա ջ ն ա պ ե տ ք և ի ր ա գ ո ր ծ ե լ ո ւ ր կ ո մ ու ն ի ս տ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ու թ յ ո ւ ն ը պ ե տ ք և ի ր ա գ ո ր ծ ե լ ո ւ ր կ ո մ ու ն ի ս տ ա կ ա ն հ ա յ ի ր ը:

Կոմինտերնի Ա կոնգրեսը. — Կոմինտերնի Ա կոնգրեսի (22 հունիսի — 12 հուլիսի 1921 թ.) հիմնական լողունգն եր՝ պ ո լ ե տ ա ր ա կ ա ն դ ի կ ա յ ի ս տ ու ր ա յ ի պ ա յ ք ա ր ի հ ա մ ա ր ա ն հ ր ա ժ ե շ ա լ պ ա մ ի ս տ ա ր ա կ ա ն լ ա յ ն մ ա ս ս ա ն ե ր ը:

Ա կոնգրեսի որերին համաշխարհային դրության փոփոխումը վորոշեց այդ հիմնական լողունգը: Այն միջոցին, յերբ կապիտալիզմը սոցիալ-դեմոկրատիայի շնորհիվ մի փոքր կազմուրվեց նախատերազմյան սուր կրիզիսից, նա ձեռնարկեց ընդհանուր քաղաքական և անտեսական գրոհ՝ բանվոր դասակարգի վրա: Մի շաբաթ պարտություններից հետո (Վենդրիայում, Իտալիայում Գերմանիայում և այլն) բանվոր դասակարգը հարկադրված եր զրոհ տալուց ինքնապաշտամության անցնելու: Կոմինտերնի համաշխարհային կոնգրեսը իր աշխատանքի մեջ հաշվի առավ համաշխարհային դրության այդ փոփոխությունը:

Ա կոնգրեսի վորոշումները պարզաբանելու համար անհրաժեշտ ե զննել համաշխարհային տնտեսության դրությունը: Ուղիղ

գնահատեց արդյոք Կոմինտերնը ժամանակակից եպոխան, վորպես կապիտալիզմի կործանման և պրոլետարական հեղափոխության արագ զարգացման եպօխա: III կոնդրեսի պատասխանը այդ հարցի մասին ասում եւ. «Չնայած վոր կապիտալիզմը վորոշ աստիճան ամրապնդվել եւ, — նրա քայլքայումը շարունակվում եւ: Սակայն այդ քայլքայումը անընդհատ չեւ և զարգանում եւ վոչ թե ուղիղ գծով, — վոր գեպի անդունդն եւ տանում, — այլ մի շարք վերելքների և կրիզիսների միջոցով: Պարտություններով և կարիքով խեղդված բանվորական մասսաների գործներությունը տըստեսական կրնյունկառուրայի աշխուժանալու գեպքում անխուսափելորեն ուժեղանալու յեւ: Կապիտալիստական տնտեսության աշխուժացումը չի նշանակում կապիտալիզմի մահացու հիվանդության բուժում: Այդ մահացու հիվանդությունը — կապիտալիստական անհաղթելի հակասությունները — շարունակում եւ ներգործել տարբեր պայմաններում և տարբեր ձևերով:

Կապիտալիզմի ստարիլիզացիան. — Կոմինտերնի III կոնդրեսի առաջարկը, վոր վերաբերում եր կապիտալիզմի մինչպատերազմյան ստարիլիզացիայի սիմպտոմներին, իր հետագա զարգացման ընթացքում Կոմինտերնի հաջորդ կոնդրեսներում վորոշ ձևակերպում ստացավ: V համաշխարհային կոնդրեսը ձեվակերպեց կապիտալիզմի ստարիլիզացիային վերաբերյալ դրույթը և շեշտրեց այդ ստարիլիզացիայի հարաբերականությունը. Կոմինտերնի գործկոմի VI լայնացրած պլենումը, նոր մոմենտների վրա հիմնվելով, առանձին ուշադրությամբ ձևակերպեց ստարիլիզացիայի անցողական անհաստատ բնույթը: Համենայն դեպս III կոնդրեսի կողմից հարցի համապատասխան դրումն սկզբունքային բնույթ եր կրում Կոմինտերնի հետագա ամբողջ աշխատանքի համար:

Հեղափոխական ստրատեգիա յել տակիլա. — Նույն տեսակ սկզբունքային նշանակություն ունեն նաև III համաշխարհային կոնդրեսի նույնանման վորոշումները, վոր վերաբերում են տակտիկայի հարցերին: 1921 թվին, մարտի յելույթի (Գերմանիայում) պարտությունից դաս քաղելով, III կոնդրեսը դատապարտեց այն ժամանակի Գերմ. կոմկուսի կենտրոմի ձախ մեծամասնությունը, վորը, հարձակումը կովի միակ համապա-

տասխան մեթոդ համարելով, արհեստական կերպով արագացնում եր մարտյան գեղքերը: Դատապարտելով հարձակման այդ թեորիան, III կոնդրեսը առաջարկեց կոմկուսակցություններին ավելի հաստատուն, ավելի խնամքով պատրաստել պրոլետարական կոփմերը: Միաժամանակ III կոնդրեսը ամենավճռական կերպով դատապարտեց աջակողմյաններին, վորոնք մարտյան ապատամբությունը բնորոշում եյին իբրև «պուտչ», և հաստատեց Լեիի արտաքսումը Կոմինտերնի շարքերից:

Պայխար՝ մասսաները նվաճելու համար. — Կոմինտերնի III կոնդրեսին լենինը ասում եր — «Կազմակերպվելով իբրև կուսակցություն, մենք պետք եւ սովորենք և պատրաստենք հեղափոխությունը»: Լենինը կարուկ դեմ եւ յելնում նրանց, վորոնք չեն ըմբռնում լայն աշխատավոր մասսաների մասնակցության վիթխարի նշանակությունը պրոլետարական հեղափոխության հաղթության համար: «Հաղթության համար հարկավոր եւ մասսաների համակրությունը... բացարձակ մեծամասնություն ամենագամ անհրաժեշտ չեւ. սակայն հաղթության համար, իշխանությունը պահպանելու համար անհրաժեշտ եւ վոչ միայն բանվոր դասակարգի մեծամասնություն... այլ և կեղեքվածների և գյուղական աշխատավոր բնակչության մեծամասնություն»: Բոյլերիկյան նախընթաց կոփմերից ստացած փորձառության հիման վրա III համաշխարհային կոնդրեսը հետեւյալ լոգունգն առաջարեց — Հառաջ, մասսաներ նվաճելու համար:

III կոնդրեսը քննեց պրոֆմիտություններում տարվող աշխատանքը և կազմակերպչական հարցերը, ընդարձակելով նախընթաց կոնդրեսի վորոշումները:

Նեպի համաշխարհային նեանակությունը. — Ահազին նշանակություն ունի III համաշխարհային կոնդրեսի վորոշումը ՌԿԿ (բ) տակտիկայի վերաբերյալ: Կոնդրեսը լիովին հաստատեց նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու ուղիղ մինելը: Նոր տնտեսական քաղաքականության տակտիկան ցույց տվեց, վոր III համաշխարհային կոնդրեսը միջազգային թերութիւն կործնական նշանակություն ունի: Ուստի և կոնդրեսը վճռեց բացարձել այդ քաղաքականության եյությունը բոլոր յերկրների բանվորների լայն մասսաներին:

Միասնական նակատի տակիրկան. — «Հեղափոխական վերելքի բացակայության դեպքում կոմունիստական կուսակցությունը, յելնելով աշխատավորների առողջա կարիքներից, պետք ե մասնավոր լոգունգներ և պահանջներ առաջադրի՝ հարմարացնելով կոմունիստական խնտերնացիոնալի հիմնական խնդիրներին. Միասնական ճակատի տակտիկան, փորպես կապիտալի գեմ մղվող պայքարի ամենահաջող միջոց, փորպես մասսաների դասակարգային մորթիլիզացիայի և ռեֆորմիստական վերիխուշկաներին մերկացնելու և մեկուսացնելու ամենահաջող միջոց, կոմկուսակցությունների տակտիկայի կարևորագույն մասն և կազմում ամբողջ նախնեղա փոխական շրջանում» (Կոմինտերնի ծրագիրը):

Կոմինտերնի ծրագրի այդ ցուցմունքի համար սկզբունքային հիմք ծառայեց Կոմինտերնի գործկոմի պլենումի վրոշումը (1921 թ. դեկտեմբերին) «Միասնական Փրոնտի վերաբերյալ թեզիսներում»:

Այդ թեզիսները բացատրում են III կոնգրեսի տված գդեպի մասսաները» լողունգի տակտիկայի եյտթյունը: Միասնական քրոնտ ասելով, պետք է հասկանալ բոլոր բանվորների միությունը, վորոնք պատրաստ են կովկելու կապիտալիզմի դեմ: Կոմունիստները պետք ե ձգտեն վորքան կարելի յե սերդ ռազմական կապ հաստատել բոլոր բանվորական կազմակերպությունների միջև և միասնական յելույթի նախաձեռնությունը իրենց ձեռքն առնեն: Կոմունիստական Խնտերնացիոնալի և նրա սեկցիաների խնդիրը կայանում ե նրանում, վոր մասսաների առաջմերկացնեն սոցիալ-դեմոկրատիային, պրոլետարիատի միասնական ֆրոնտի այդ քայլքայիշխն: Սակայն դրա նախապայմանն ե՝ կոմունիստական կուսակցության լիակատար ինքնուրույնությունը և քննադադարության լիակատար աղատություն կոմունիստների համար:

Կոմինսերնի գործադիր կոմիտեի առաջին լայնացրած պլե-
նումը. — Կոմինսերնի գործկոմի առաջին լայնացրած պլենումը
1922 թ. փետրվար-մարտ ամիսներին նույնպես զբաղվեց միաս-
նական ֆրոնտի տակտիկայի հարցով: Պրոլետարիատի միասնա-
կան ֆրոնտի անհրաժեշտությունը՝ բուրժուազիայի գրոհը յետ
մղելու համար՝ ավելի և ավելի խոր եր թափանցում բանվոր-

ների լայն մասսաների գիտակցության մեջ։ Մասսաների ազգեցության տակ II և 2½ Խնտերնացիոնալի ղեկավարները ստիպված եյին կոմինատերնի հետ կապ հաստատելու ուղիները գիւնտռել այդ հարցը քննելու համար։ Կոմինատերնի գործկոմի լայնացրած պլենումը քննեց 2½ Խնտերնացիոնալի առաջարկը՝ յերեք Խնտերնացիոնալների կոնֆերենցիա գումարելու համար։ Ֆրանսիացին կոմունիստաները այդ պլենումին հայտարարեցին, վոր նրանք հնարավոր են համարում միասնական ֆրոնտի տակտիկան գործադրել լոկ տնտեսական բնագավառում։ Իտալական «Ճախերը», Բուրդիգայի ղեկավարությամբ, հայտարարեցին, վոր միասնական ֆրոնտի տակտիկան հնարավոր ե լոկ պրոֆեսիոնալ շարժման բնագավառում։ Այդ սիսալ հայցքներին հակագլիո, լայնացրած պլենումը գործկոմի վերոնիշյալ վորոշման հիման վրա բանաձև մշակեց։ Այդ վորոշման մեջ գործկոմը հատուկ շեշտում ե, վոր միասնական ֆրոնտի տակտիկան գործադրելը յուրաքանչյուր այդ ղեկավարներից անջատելու կոմունիստական կուսակցության պարտականությունն ե, և վոր այդ տակտիկան զորեղ միջոց ե՝ ռեփորտիստ ղեկավարների ուղղությունունիւնում մերկացնելու և բանվոր մասսաներին այդ ղեկավարներից անջատելու, ինչպես նաև պրոլետարական մասսաները կոմինատերնի գրոշակի տակ միավորելու։ Ի վերջո կոմինատերնը ընդունեց յերեք խնտերնացիոնալների կոնֆերենցիային մասնակցելու առաջարկը։

Յերեք ինտենացիոնալների կոնֆերենցիան. — Յերեք ինտեր-
նացիոնալների կոնֆերենցիան վորոշեց մի կոմիսիա ընտրել,
ուր մասնակցում եյին բոլոր յերեք ինտերնացիոնալները: Կոնֆե-
րենցիան վորոշեց միահամուռ գեմոնստրացիա կազմակերպել և
առաջադրեց լողունգներ՝ միահամուռ պայքար 8-ժամյա բան-
վորական որվա համար, անգործության դեմ, պըո-
ւետարիատի միասնականության համար, ընդդեմ
կապիտալի գրոհի, ոռուսական հեղափոխությունն ը-
պաշտպանելու ոգտին, ինչպես նաև բոլոր կապիտալիս-
տական յերկրների և Խորհրդային Ռուսաստանի միջն քաղաքա-
կան և տնտեսական կապեր հաստատելու ոգտին, բոլոր յերկր-
ներում պրոլետարիատի միասնական ֆրոնտ կազմակերպելու
ոգտին: Բանվորական մասսաների ձնշման տակ, ոեփորմիստները

հարկադրված եյին մասնակցել կոնֆերենցիային և ընդունել վո-
րոշումներ, բայց իրոք կատարյալ սաբուտաֆ հայտարարեցին և
վերջիվերջո չհաջողվեց վոչ մի վորոշում իրականացնել։ Այդ
կոնֆերենցիայից քիչ հետո ռեփորտիստները իրանց սեփական
կոնֆերենցիան գումարեցին, ուր իրականացրեն մի անական
փրոնա՝ ընդգեմ կոմինտերնի:

Կոմինտերնի գործադիր կոմիտեյի լերկորդ լայնացրած պլե-
նումը. — Այդ անցքերի դասերը յերեան հանեց կոմինտերնի գործ-
կոմի Ա լայնացրած պլենումը՝ 1922 թ. հունիսին։ Պե-
նումը հաստատեց, վոր չնայած միասնականության մասին
հոգացող կոմիտիայի քայլայմանը, միասնական ֆրոնտի տակ-
տիկայի նախապայմանները պահպանում են իրենց արժեքը և
ավելի մեծ դեր են խաղալու, քան առաջ։ Ուստի և կոմին-
տերնը պետք է առաջիկայում ևս ձգտի միասնական ֆրոնտ
կազմակերպելու։

Կոմինտերնի IV կոնգրեսը. — «Ի՞ր հերթին միջազգային պլո-
ւետարիատը, վորը ԽՍՀ Միության մեջ ունի իր միակ հայրե-
նիքը — իր նվաճումների ամենակարևոր արդյունքը և իր միջազ-
գային ազատագրման ամենակարևոր ֆակտորը, — պարտավոր և
նախատել ՍԽՀՄ սոցիալիստական կառուցման հաջողությանը և
նրան ամեն միջայով պաշտպանել կապիտալիստական պետու-
թյունների հարձակումից» (Կոմինտերնի ծրագիրը)։ Այս խոս-
քերի վոգով ընթացան կոմինտերնի IV համաշխարհական համար հա-
յին կոնգրեսի աշխատանքները (1922 թ. նոյեմբերի 5 —
դեկտեմբերի 5)։ IV կոնգրեսը փոխվեց համաշխարհական հայ-
յին կոմունիստական պրոլետարիատի հզոր ցույցի
հոգուտ ոռուսական հեղափոխության։ Կոնգրեսը
գումարվեց Խորհրդային իշխանության գոյության 5-րդ տարե-
քարձին։ Խորհրդային իշխանության հինգամյակի մասին զե-
կուցում արին Լինինը, Կլարա Ֆետիկինը և Բելա-Կունը։ Այդ զե-
կուցումների և այդ հարցին վերաբերյալ բանաձեռ մեջ շեշտվում
եր չոկտեմբերյան նշաղափոխության և Խորհրդային իշխանության
գոյության վիթխարի նշանակությունը Կոմինտերնի և միջազ-
գային հեղափոխության գործի համար։

Մոպրի կազմակերպումը. — IV համաշխարհային կոնգրեսը
կայացավ, յերբ Բուալիայում տեղի ունեցավ Փաշիստական հեղա-
շրջում։ Բոլոր յերկրներում սպիտակ տեսորի գործադրման հետևան-
քով կոնգրեսը առաջարկեց բոլոր յերկրների կոմունիստական
կուսակցություններին նյութական և բարոյական ոգնություն
կազմակերպել բուրժուական բանտերում բանտարկվածների հա-
մար։ Յեղ այլպիսով, IV կոնգրեսը Մոպրի հիմքը դրեց։

Պայքար ուղմական վտանգի դեմ. — IV կոնգրեսը քննեց
Վերսալի հաշտության պայմանագրի հարցը և մատնացույց արեց
նոր պատերազմների աճող վտանգի վրա։ Այդ հարցը
քննության եր յենթարկվել արդեն կոմինտերնի գործկոմի առա-
ջին լայնացրած պլենումն։ Այդ պլենումը վորոշում կայացրեց
կոմունիստների աշխատանքը բանակներում, և մանավանդ յերե-
տասարդության մեջ, ել ավելի ուժեղացնել։ IV կոնգրեսից քիչ
հետո, կիդկ-ի III լայնացրած պլենումն (1923 թվին), Կո-
մինտերնը նորից զբաղվեց պատերազմի վտանգի աճման հարցով։

Կոմինտերնի V կոնգրեսը. — Կոմինտերնի V համաշխարհային
կոնգրեսը (17 հունիսի — 8 հուլիսի 1924 թ.) զբաղվեց միասնա-
կան ֆրոնտի տակտիկայի տված դասերով։ V կոնգրեսը տվեց
հաշվեկշիռը Գերմանիայի 1923 թվի հոկտեմբերյան անցքերի և
յերեան հանեց, վոր Կոմինտերնի մի շարք սեկցիաներում, միաս-
նական ֆրոնտի տակտիկան գործադրելիս, առաջ են յեկել թե
աջ և թե «ձախ» թեքումներ։

Միասնական ֆրոնտի տակտիկայի խնդարյուրումը. — Աջերը
ի գերեկ եյին հանում միասնական ֆրոնտի տակտիկայի հիմնա-
կան խնդիրը, մոռանալով, վոր այդ տակտիկայի գլխավոր նպա-
տակը դավաճան-ղեկավարների մերկացումն և բանվորական
մասսաներին նրանց աղբեցությունից անջատելը։ Միասնական
ֆրոնտի լոգունգը նրանք ըմբռնում եյին ամենից առաջ գորպես
կոչ հաշտվելու և նույնիսկ միասնալու սոցիալ-ղեմոկրատիայի
վերաբերյալ հետ։ Աջերի՝ միասնական ֆրոնտի տակտիկայի
այդ խնդարյուրումը առանձին ծանր հետեանքներ ունեցավ հե-
ղափոխական կրիպեսի ժամանակ Գերմանիայում 1923 թ. հոկ-
տեմբերին։ Գեկ կենտրոնի մեծամասնությունը բրանդերի դեկա-

վարությամբ համաձայնության յեկավ «ձախ» սոցիալ-դեմոկրատիայի վերխուշկայի հետ, վորոնք վճռական մոմենտում դավաձանեցին նրան:

Մյուս կողմից, ոյլարածախ տարրերը (իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա) խեղաթյուրում եյին միասնական ֆրոնտի տակտիկան, սարուածի յենթարկվելով պրոլետարական մասսայական կազմակերպությունների մեջ աշխատանքը, մանավանդ պրոֆմիություններում, այն պատրվակով, վոր այդ կազմակերպությունները դեկավարում են ոեփորմիստները:

Վ կոնգրեսը միասնական թրոնի տակտիկայի մասին. — «Միասնական ֆրոնտի տակտիկայի ուղիղ գործադրությունը և առասարակ մասսաները նվաճելու հարցի լուծումը իր հերթին պահանջում և սիստեմատիկ և համառ աշխատանք՝ պրոֆմիություններում և պրոլետարիատի ուրիշ մասսայական կազմակերպություններում — ասում և Կոմինտերնի ծրագիրը: Կոմինտերնի Վ կոնդրեսը մշակեց միասնական ֆրոնտի տակտիկայի ճշգրիտ ձևակերպությունների միայն սոցիալ-դեմոկրատիայի և պրոֆմիությունների վերխուշկայի հետ: Միասնական ֆրոնտի անցկացությն ներքեց (մասսաների հետ) անհրաժեշտ և միշտ և ամենուրեք: Միասնական ֆրոնտի սահմանություններքեցի և միաժամանակ բանակցություններում միաժամանակ վերխուշկայի հետ — թույլատրվում և մանավանդ այն յերկներում, ուր սոցիալ-դեմոկրատիան դեռ ևս շատ ուժեղ և:

Կոմինտերնի III կոնդրեսի լողունգը՝ «դեպի մասսաները»՝ Վ կոնդրեսում ավելի ևս շեշտվում և. «դեպի մասսաները և դարձյալ դեպի մասսաները», — կոչ և անում Վ կոնդրեսը:

Շարունակելով կոմինտերնի IV համաշխարհային կոնդրեսի դիմը, այսինքն մասսաներ նվաճելու պայքարի դիմը, կոմունիստական կուսակցությունները պրոլետարիատի խւկան մասսայական կուսակցությունները պարձնելու պայքարի դիմը, — V համաշխարհային կոնդրեսը ընդունեց մի շարք խիստ կարևոր կազմակերպչական վորոշություններ:

Արտադրական բջիջներին անցնելը. — Կոմինտերնի հետագա ամբողջ զարգացման համար առաջնակարգ նշանակություն ունի արտադրական բջիջներ կազմակերպելու դիրեկտիվը: Համաշխար-

հային V կոնդրեսի վորոշությունը (կոմունիստական կուսակցությունների կազմակերպչական կառուցվածքի, կուսակցական կոմիտեների ֆունկցիաների և այդ կոմիտեների պրոֆմիություններում և ուրիշ մասսայական կաղակերպություններում գտնված կոմունիստական ֆրակցիաների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին, ինչպես նաև անկուսակցական բանվորների ու բանվորությների մեջ մասսայական աշխատանք կազմակերպելու մասին) հիման վրա Կոմինտերնի բոլոր սեկցիաները կազմակերպչական բնագավառում անցան սկզբունքային վերակազմակերպմանը:

Կոմինտերի սեկցիաների բոլորի վիզենիզացիան. — Համաշխարհային V կոնդրեսը, Ռուսաստանի բոյլենիկյան կուսակցության հարուստ փորձի հիման վրա, ընդունում և այդ բոլոր վորոշությունները և դրանք հաստատում և Կոմինտերնի սեկցիաների բոյլենիզացիայի մասին ընդունած առանձին բանաձեռնում: Այդ փորոշությունը ընդհանրացնում և լինինյան բոյլենիկյան կուսակցության վողջ հարուստ փորձը, վորն ունի միջազգային նշանակություն և վորը պետք և փոխադրվի Կոմունիստական Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաները:

1923 թ. Գերմանիայում տեղի ունեցած հեղափոխական շարժման պարտության հետևանքով, համաշխարհային V կոնդրեսը հաստատում և կապիտալիզմի հարաբերական ստարիլիզացիայի ամրապնդումը: Սակայն նա միաժամանակ ընդգծում և նաև այդ ստարիլիզացիայի ժամանակավոր բնույթը: Կրիպտուային մի շարք յերկույթներ Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլն և նմանապես աշխատավորական մասսաների գծողության խորացություն ու գասակարգային պայքարի որումը, վկայում են (ինչպես հաստատեց համաշխարհային V կոնդրեսը) այդ ստարիլիզացիայի վոչ-տեսական բնույթը:

Հինգերորդ կոնդրեսի ժամանակաշրջանում ֆաշիզմը մի շարք յերկրներում տոնում և իր հաղթական յերթը ջախջախած բանվոր գասակարգի դեմ: Իսկ մի շարք ուրիշ յերկրներում սկսվում և գեմմոկրատական երած-ն:

Բուրժուազիայի սիրապետորյան յերկու մերող — մտքակ ու տախարհաց. — Սպառնացող հեղափոխության վախից, Անգլիայի,

Ֆրանսիայի և Գերմանիայի բուրժուազիան ստիպված եր յերկաթե բռունցքի քաղաքականությունից անցնել խարելու քաղաքակա- նությանը՝ կարծեցյալ արտաքին զիջումներ անելով: Կոմինտերնի ծրագիրը հետեւյալ կերպով ե բնութագրում տիրա պետության այդ յերկու մեթոդի կիրարկումը բուրժուազիայի կողմից. «Հարմարվելով քաղաքական կոնյուկտուրայի փոփոխությանը, բուրժուազիան ոգտագործում է՝ ֆաշիզմի մեթոդները և սոցիալ-դե- մոկրատիայի հետ կոալիցիա կազմելու մեթոդները և սոցիալ-դե- մոկրատիայի համար կոալիցիան, կապիտալիզմի համար ամենակրիտի- կական մոմենտներում, շատ հաճախ ֆաշիստական դեր ե խաղում»: Մուսսոլինիի տիրապետությունն իտալիայում և բանվորական կա- ռավարությունն Անգլիայում — սրանք են բուրժուազիայի տիրա- պետության այդ յերկու մեթոդի լլասիկ որինակները:

Կոմինտերնի յեվ նրա սեկցիաների անումբ. — Համաշխարհային V և VI կոնգրեսների միջանկյալ տարիներում Կոմինտերնը նշանակալից չափով ընդլայնում ե իր ազգեցությունը: Նրա սեկ- ցիաները կազմակերպչորեն ամրապնդվում են: Կոմունիստական կուսակցությունների քանակական աճումը նրանց ամրապնդման ճշգրիտ չափանիշ հանդիսանալ չե կարող: Այն հանգամանքը, վոր կոմունիստական կուսակցությունները յենթարկվում են հարա- ծուն հետապնդման, — խոչընդոտ ե հանդիսանում կազմակերպու- թյունների քանակական աճմանը: Կոմունիստական կուսակցու- թյունների ազգեցության աճումը հայտնաբերվում ե նրանց՝ դա- սակարգային բազիսումներում կատարած դերի մեջ, պրոֆմիտյուն- ներում և ուրիշ մասսայական կազմակերպություններում վայելած ազգեցության մեջ, ինչպես նաև պարլամենտական ընտրու- թյուններում: Կոմունիստներին տրված ձայնների քանակը շատ յերկրներում նկատելի չափով աճում ե:

Մի քանի յերկրների կոմունիստական կուսակցություններին հաջողվել ե, իրենց զեկավարության տակ, V կոնգրեսի վորո- շումների վոգով մասսայական կազմակերպություններ ստեղծելու բնագավառում համեմ նշանակալի հաջողությունների: Վորպես որինակ, հիշենք ամբողջ աշխարհի աշխատավորությանը քաշ հայտնի Գերմանիայի Կարմիր Ֆրոնտվիկների Միությունը:

Յերտասարդության Միության կոմունիստական Խներնացիո- նալը. — Կոմինտերնի պայքարում առանձնապես խոշոր նշանա-

կություն ունի Յերիտասարդության Միության Կոմունիստական Խներնացիոնալը, բոլոր յերկրների հեղափոխական պրոլետարա- կան յերիտասարդության ղեկավարը: Իր գոյության առաջին խոկ մոմենտից Յերիտասարդության Կոմունիստական Խներնացիո- նալը գլխավորում է պրոլետարական յերիտասարդության հեղա- փոխական պայքարը և բոլոր յերկրներում հանդիսանում է կո- մունիզմի հավատարիմ նեցուկն ու հենարանը, ամեն կերպ նպաս- տելով կոմունզմի աճմանը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԵԹ — ԴԱՍԿԱՐԳԱԴԱՅԻՆ ՆՈՐ ԽՈՇՈՐ ՃԱԿԱՍԱՐՏՆԵՐԻ ՀԱՆԴԵԹ

Կոմինտերնի համաշխարհային V կոնգրեսից մինչև VI կոն- գրեսը չորս տարի անցավ: Այդ տարիներում Կոմունիստական Խներնացիոնալի մարտական ֆրոնտի ուշադրությունը կենտրո- նացված եր համաշխարհային պատմական հսկայական նշանակու- թյուն ունեցող գեղգերի վրա: Այդ ժամանակաշրջանում տեղի ունեցավ անզինական ածխահատների վիթխարի գոտեմարտը կա- պիտալի հետ և ընդհանուր գործադրությունը: Մի շարք դաշտությային ապստամբություններ և ազգային-հեղափոխական կոփվեր, — առա- ջին հերթին չինական մեծ հեղափոխությունը, — համաշխարհա- յին իմպերիալիզմի շարքերում կազմակուծում մտցրին: 1927 թ. վեննայի փողոցներում տեղի յե ունենում բանվորների արյու- նահեղ պայքարը ավստրիական աճող ֆաշիզմի դեմ: «Այս բոլոր փաստերը և, վերջապես, այնպիսի գեղգերը, վորպիսիք են՝ ապ- ստամբությունն Խոգոնեղիայում, խորը հուղումները Հնդկաստա- նում, չինական մեծ հեղափոխությունը, վոր ցնցեց ասիական ամբողջ մայր ցամաքը, — հանդիսանում են ողակները միջազ- գային հեղափոխական մի շլթայի և բաղադրիչ մասերը կապիտա- լիզմի խորագույն ընդհանուր տանգապի» (Կոմինտերնի ծրագրից):

Յերկու սկզբունքուն թօնամի բանակներ — համայստինի խարհային խմբերիալիզմը յեվ ԽՍՀՄ. — Վորպես հետեւանք իմպերիալիստա- կան առաջին համաշխարհային պատերազմի և Ռուսաստանի պրո- լետարիատի Հոկտեմբերյան հաղթանակի, ամբողջ աշխարհը բա- ժանվել յերկու՝ սկզբունքորեն միմյանց թշնամի բանակների. — «Իմպերիալիստական պետությունների բանակը և պրոլետարիատի

գիկտատուրայի բանակը Խորհրդային Միության մեջ։ Հակասությունը Խորհրդային Միության և կապիտալիստական աշխարհի միջև չի կարող լուծվել կապիտալիզմի կողմից այլ կերպ, բայց յեթե Խորհրդային Միությունը վոչչացնելու փորձի միջոցով։

Պատերազմի վտանգը. — Համաշխարհային տնտեսության կապիտալիստական ներհակություններն ավելի յեն սրվել, Նավթի, կառուչուկի, բամբակի, հանքերի և շուկաների ու կապիտալի կիրարկման շրջանների վերաբաժանման համար մղվող պայքարը անխուսափելիորեն մղում և դեպի նոր համաշխարհային պատերազմ։

Հակասություններն իմպերիալիստական յերկրների և գաղութային ու կիսազարդութային ժողովուրդների միջև արագ աճում են։ «Զինական մեծ հեղափոխությունը, վոր շարժեց չինական ժողովրդի հարյուրավոր միլիոններ, իմպերիալիզմի ամբողջ սիստեմում հոկայական ճեղք բաց արեց» (Կոմինտերնի ծրագրից)։ Հարածուն զարթոնքը գաղութներում, գնալով, ավելի և ավելի իրենից ներկայացնում և իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի վտանգավոր ֆրոնտ։

Դասակարգային պայքարի սրումը կապիտալիստական յերկրներում. — «Վերջապես հեղափոխական տագնապն անխուսափելի նաև հասունանում և հենց իմպերիալիզմի կենտրոններում։ Բուրժուազիան հարձակում և գործում բանվոր դասակարգի վրա, ցածրացնում և պրոլետարիատի կենսական մակարդակը և վոչչացնող կրիվ և մղում աշխատավորական մասսաների կազմակերպման դեմ։ Այս բոլորն առաջ և բերում պրոլետարիատի ամենալայն մասսաների ընդդիմագրություն և սրում դասակարգային պայքարը։ «Աշխատանքի վիթխարի բաղխումները կապիտալի հետ, մասսաների ձախացման ուժեղացող պրոցեսը, կոմունիստական կուսակցությունների ազդեցության և հեղինակության աճումը, բանվորական ամենալայն մասսաների համակրանքի հսկայական աճումը դեպի պրոլետարական դիկտատուրայի յերկրը. — այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս իմպերիալիզմի կենտրոններում կատարվող հեղափոխական նոր վերելքի աճման վրա» (Կոմինտերնի ծրագրից)։

Կոմինտերնի VI կոնգրեսը. — Հենվելով Կոմինտերնի VI և VII կոնգրեսների միջանկյալ ժամանակաշրջանում կատարված՝ համաշխարհային տնտեսության և բանվորական շարժման զարգացման մանրամասն ուսումնասիրության ու Կիդկ՝ այդ նույն ժամանակամիջոցում կայացած մի շարք ընդլայնած պլենումների նախապատրաստական աշխատանքի վրա, Կոմունիստական Ինստերնացիոնալի համաշխարհային VI կոնգրեսը (1928 թ. հուլիս — ողոստոս ամիսներին) հսկայական աշխատանք կատարեց։ Նա քննադատորեն վերլուծեց յետպատերազմյան ամբողջ շրջանը և Կիդկ զեկուցման առթիվ ընդունած իր բանաձնում տվեց Կոմինտերնի տասնամյա պայքարի դասերի հաշվեկշիռը։

Կոմինտերնի ծրագրը ընդունելով, VI կոնգրեսը, մարքսիզմի հենիկմի հիման վրա, պատմական ուշիմ գնահատականի յենթարկեց կապիտալի և աշխատանքի միջև յեղած պայքարի վողջ պատմությունը և վորոշեց պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար մղվող պայքարի ընդհանուր կացությունը և պայմանները։

Կոմինտերնի ծրագիրը ուշիմ և մանրամասն ուսումնասիրության առարկա պետք և դառնա: Դա պետք և կարդան, ուսումնասիրեն և ամբողջությամբ յուրացնեն բոլոր աշխատավորները։ Կոմինտերնի ծրագրային հարցով զբաղվել ե յերեք կոնգրեսում — առաջին անգամ IV կոնգրեսում, այնուհետև V-ում, և միայն յերկարամյա աշխատանքից հետո VI կոնգրեսին հաջողվում և տալ ծրագրի վերջնական ձեռկերպումը։

Յետպատերազմյան զարգացման յերեք շրջան. — Կիդկ զեկուցման առթիվ համաշխարհային VI կոնգրեսի ընդունած բանաձնը, կապիտալիզմի յետպատերազմյան վողջ զարգացումը բաժանում և յերեք շրջանների։ Առաջին շրջանը — պատերազմը վերջանալու մոմենտից մինչեւ 1923 թ. կապիտալիզմի ամենաուժեղ կրիզիսի շրջանը։

Այդ կրիզիսից սոցիալիստական առաջին պետությունը դուրս յեկավ ամրապնդված, սակայն, մյուս կողմից, միջադրային պլուղետարիատը կրեց մի շարք ծանրագույն պարտություններ։ Այդ ճակատամարտներում զարգացան կոմկուսները — պաղապա հաղթանակների կազմակերպիչները։ Յերկրորդ շրջանը, վորն սկսվեց մոտավո-

բագես 1923 թ. վերջին, իր հետ բերեց. մի կողմից՝ կապիտալիզմի մասնավոր կայունացում, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Միության տնտեսական արագ բարդավաճում: Յերբորդ շրջանը սկսվում է այստեղ, ուր կապիտալիստական սխատեմն անցնում և տնտեսական զարդացման նախապատերազմյան մակարդակը: Այդ զարդացմանը զուգընթաց, Խորհրդային Միությունը միաժամանակ անցնում և սեկոնստրուկցիայի շրջանին:

Յերբորդ շրջանն ամենակին չի նշանակում միջազգային կապիտալիզմի հարատեկ կայունություն: Կապիտալիզմը, արտադրության իր անարխիայով և շահույթի յետեից վագելով, ծնում է նոր հակասություններ, վորոնք անխուսափելիորեն տանում են գեղի նորանոր վիթխարի կրիզիսներ: «Ամբողջ յետպատերազմյան պատմական շրջանի փորձն առացուցում է, վոր բանվոր դասակարգին ընկճելու և նրա կենսական մակարդակի վրա սխատեմատիկ ճնշում գործ դնելու միջոցով ձեռք բերված կապիտալիստական ստարիլիզացիան չի կարող չլինել մասնակի, ժամանակավոր, նեխվող» (Կոմիստերնի ծրագրից):

Կապիտալիզմն ամեն կերպ լարում է իր ուժերը նրա համար, վորպեսզի ամրացնի իր գրությունը: Նա բարձրացնում է իր տեխնիկան, հսկայական ուժերը և գործ դնում արտադրության ուցիոնալիզացիայի բնագավառում, ամենադաժան կերպով ծախսելով բանվորական կենդանի ուժը: Կապիտալի հարձակումը բանվոր դասակարգի վրա ուժեղանում և ծավալվում է: Միաժամանակ աճում և նաև պրոլետարական լայն մասսաների ծախսցումը:

Պայքարի ուժեղացումը սոցիալ-դեմոկրատիայի յեկ միջազգային ուժությունի դեմ: — Պայքարը կապիտալի դեմ ներկա պայմաններում անխզելիորեն կապված է սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարի հետ: «Միջազգային հեղափոխությանը ընթացքում, հեղափոխության դեմ գործոն կերպով կավոր և կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիան ակտիվորեն պաշտպանող խոշորագույն հականեղափոխական ուժի առանձին նշանակություն են ստացել ս. ~ դ. կուսակցությունների և ուժորմիստական պրոֆմիությունների գեկավար կադրերը» (Կոմիստերնի ծրագրից):

Սոց.-դեմոկրատիան դարձել ե բացարձակ և ակնհայտ հականեղափոխական ուժ: Այժմ նրա գլխավոր դերն այն ե, վոր-

պեսզի կազմալուծի պրոլետարիատի միասնականությունը, վորն անհրաժեշտ է իմալերի ակտիզմի դեմ մղվող պայքարում: Միջազգային հեղափոխության նախապատրաստումը և հաղթանակի կազմակերպումը հրամայութեն պահանջում են լարված պայքար ուժի դեմ:

Պայքար պատերազմի վամիզի դեմ: — Վեցերորդ կոնգրեսը միջազգային դրությունը քննելով և կապիտալիզմի հակասությունները վերլուծելով, ընդունեց գալիք պատերազմի հարցի կենարունական նշանակությունը ներկա ամբողջ շրջանի համար: Այդ պատճառով ել պատերազմի հարցը, իմպերիալիստական նոր պատերազմների դեմ պայքարելու միջոցների հարցը, համաշխարհային VI կոնգրեսի աշխատանքի կենարուն և կազմում: Համաշխարհային VI կոնգրեսը նախապատրաստություն դարձրեց նաև գաղութային հարցի վրա:

Գրոլետարական ամենալայն մասսաների նվաճման խնդիրը գնալով ավելի յեկ ավելի հրամայողական ու անհետաձգելի յեղանում ամբողջ Կոմինտերի համար: — Պայքարը բանվոր դասակարգի ներսում գտնվող՝ կոմունիզմին թշնամի ուժերի դեմ և առաջին հերթին սոցիալ-դեմոկրատիայի դեմ — հանդիսանում է կոմունիստական կուսակցության գլխավոր խնդիրներից մեկը: VI կոնգրեսը քննեց Կոմինտերնի սեկցիաների աշխատանքը և մատնանշեց մի շարք խոշոր թերություններ, վոր գործել են կոմունիստական կուսակցությունները՝ ստրատեգիական և տակարկական խնդիրները կենարգործելիս: Ավելի շատ ուշադրություն պրոֆմիությունների աշխատանքին, ավելի շատ ուշադրություն՝ կուսակցության աղեցությունը գյուղացիության վրա ուժեղացնելուն! Ամեն կերպ պաշտպանություն ցույց տալ գաղութներում տեղի ունեցող հեղափոխական աղատագրական շարժումներին և ընդհանրապես ճնշված ժողովուրդների շարժումներին! Սրանք են VI կոնգրեսի լոգունգները:

Կոմինտերի միասնականությունը երա առաջ դրված խնդիրների հաջող կատարման յերաշխիքն ե: — Լենինի ուսմունքի վոգով և բոյլշեմիկյան կուսակցության փորձի հիման վրա Կոմինտերնը ամբացրեց բոյլշեմիկյան իր հիմքերը՝ անդադար պայքարելով թե-

«ձախ» և թե աջ թեքումների դեմ: Վ համաշխարհային կոնգրեսից հետո Կոմինտերնը ստիպված եր մի շարք անգամ համառ պայքար մղելու զանազան ոպպողիցիոն հոսանքների դեմ: ՎI համաշխարհային կոնգրեսը ապացուցեց Կոմինտերնի կատարյալ միասնականությունը: Շարքերի այդ միասնականությունը ձեռքբերվեց արոցկիզմը հաղթահարելու հիման վրա: Մկան Վ համաշխարհային կոնգրեսից, Կոմինտերնի մի շարք պլենումները կտրականապես դուրս յեկան տրոցկիզմի դեմ, վորը փորձում եր վերաքննել լենինիզմի հիմունքները: ՎI կոնգրեսը ցույց տվեց, վոր տրոցկիզմը միանդամայն մերկացված և վարկաբեկված ե Կոմինտերնի շարքերում:

Կրակր ուղղել զիխավորապես աջերի դեմ. — Կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիայի պայմաններում սոցիալ-դեմոկրատիայի զանազան հոսանքները ազդեցություն են գործում կոմունիստական կուսակցությունների առանձին խավերի վրա: Կոմինտերնի ՎI համաշխարհային կոնգրեսը պայքարի կրակը ուղղեց զլիսավորապես աջ թեքման դեմ (կոմունիստական շարժման մեջ): Մենք չպետք ե մոռանանք սոցիալ-դեմոկրատիայի դեռևս պահպանվող ուժը բանվոր դասակարգի շարքերում: Միլիոնավոր բանվորներ ընտրություններին քվեարկում են դեռևս հոգուտ սոցիալ-դեմոկրատիայի: Սոցիալ-դեմոկրատիայի իդեոլոգիական ազդեցությունը դեռևս շատ մեծ ե և թափանցում ե համախ բավական զգալի չափով՝ նույնպես և կոմունիստական կուսակցության շարքերը: Ուստի և պայքարի կրակը պետք է ուղղել զլիսավորապես աջ կողմը: Սակայն միաժամանակ չպետք ե մոռանալ, վոր գոյություն ունեն նաև «ձախ» թեքումներ, առանձնապես պետք ե պայքարել նաև այդ «ձախերի» դեմ և լիկվիդացիայի յենթարկել տրոցկիստական մնացորդները Կոմինտերնի շարքերում:

Կոմինտերնը պրոլետարիատի միակ դեկավարն է իշխանության համար մղվող պայքարում. — Կոմինտերնի ՎI համաշխարհային կոնգրեսում ներկայացվում եյին 59 կոմունիստական կուսակցություններ, այսինքն տասը սեկցիաներով ավելի, քան Կոմինտերնի Վ համաշխա հային կոնգրեսումն եր: Տասը տարվա անդադար պայքարի ընթացքում Կոմունիստական ինտերնացիոնալը ամրացրեց իր կազմակերպությունը և իր իդեոլոգիական ու կազմա-

կերպչական ազդեցությունը տարածեց կապիտալիստական և գաղութային յերկրների աշխատավորական ամենալայն մասսաների վրա: Կոմինտերնը ամենուրեք կանգնած ե իր մարտական դիրքերի վրա: Նա հանդիսանում ե համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի միակ ներկայացուցիչը, հանդիսանում ե ԽՍՀ Միության առաջին սոցիալիստական պետության հավատարիմ պահապանը և պրոլետարիատի՝ համաշխարհային դիկտատուրայի համար մղվող պայքարի դեկավարը: «Կոմունիստական ինտերնացիանը սեկցիաները գիտեն միայն մեկ դիսցիպլինա՝ միջազգային պրոլետարիատի դիսցիպլինան, վորը ապահովում ե բոլոր յերկրների բանվորների հաղթական պայքարը համաշխարհային պրոլետարական դիկտատուրայի համար» (Կոմինտերնի ծրագիրը):

«Կոմունիստական նվիրական քաջությամբ են մղում այդ պայքարը՝ միջազգային դասակարգային ֆրոնտի բոլոր մասերում, չնայած բուրժուազիայի արյունոտ տեսորին, և հաստատապես համոզված են, վոր պրոլետարիատի հաղթանակը անխուսափելի և անդիմադրելի յե» (Կոմինտերնի ծրագիրը):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱՇԽԱՐՉԱՅԻՆ ԴԻԿԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ ՄՆՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Մարքսի յեկ Ենգելսի Կոմունիստական մանիֆեստը. — 80 տարի յեանցել այս որից, յերբ Մարքսը և ենգելսը «կոմունիստների խմբակի» պրոպագանիստական այդ փոքրիկ խմբակի անունից հայտարարեցին «կոմունիստական մանիֆեստը» (1847 թ.): Այն շրջանում, յերբ կապիտալիզմը նոր եր սկսում իր հաղթական արշավը, զիտական սոցիալիզմի հիմնադիրները «կոմունիստական մանիֆեստում» հայտարարեցին կապիտալիստական սիստեմի անխուսափելի անկումը և պրոլետարիատին կոչ արին՝ իրագործել պատմության արձակած մահական դասավճարը: Սակայն, սկզբում, «կոմունիստական մանիֆեստը» հասավ միայն մի փոքրիկ ավանդարդին, առաջավոր մարտիկների մի խմբին, վոր նախաձեռնեց պրոլետարական մարտական կազմակերպություններ հիմնելու առաջին փորձերին:

«Կոմունիստական մանիֆեստը» մի կոչ եր՝ կոմունիստներին միացնելու: Դա առաջին քաղաքական ծրագրային մասսայական

կոչն եր՝ կոմունիստներին ուղղված։ Մանիքնստը քննում եր կապիտալիստական այժմեյականությունը և հանձարեղ կերպով նախատեսնում պրոլետարական դասակարգային պայքարի ընթացքը։ «Կոմունիստական մանիքնստի» լույս տեսնելուց հետո, պրոլետարական դասակարգային պայքարի տասնյակ տարիները կյանքում մարմնացրին Մարքսի և Ենդելսի հանձարեղ նախասածությունները։

I Խնտերնացիոնալ։ — «Կոմունիստական մանիքնստի» լույս տեսնելուց մի քանի տարի հետո կոմունիստների միությունը լիկվիդացիայի յենթարկվեց։ Միայն 1864 թ. հիմնվեց Բանվորների Միջազգային Ընկերությունը։ Դարձյալ Մարքսը ձեռակերպեց ծրագիրը այդ ընկերության համար — I պրոլետարական Խնտերնացիոնալի համար։ Այժմ արդեն հարցը վերաբերում եր գոյություն ունեցող պրոլետարական կազմակերպությունների միջազգային միավորմանը, վորոնք հասել եյին զարգացման տարբեր աստիճանների, և նպատակների ու պայքարի մեթոդների խնդրում տարբեր հայցքներ ունեին։ Մարքսը գրեց մի կոչ, վորի մեջ բացատրում ե միջազգային պրոլետարական կազմակերպություն ստեղծելու անհամարժեշտությունը և հորդորում մտնել նրա շարքերը։ Միաժամանակ Մարքսը գրեց I Խնտերնացիոնալի կանոնադրության մասին մի բացատրական, վորի մեջ նա պարզ կերպով ցույց ե տալիս նպատակը և նիշում ե ամբողջ կոմունիստական շարժման ուղին։ Յեթե «Կոմունիստական մանիքնստը» մի զորեղ հորդոր եր՝ հեղափոխական ուժերը կոմունիզմի գրոշակի տակ համախմբելու համար, ապա Մարքսի կազմաձ կոչը — I Խնտերնացիոնալի ծրագիրը — ինչպես հրաշալի կերպով արտահայտվել և ֆրանս Մերինգը — հանդիսացավ «գրոշակի բարձրացումն, դրոշակի, վորը առանձին յերկրների կովող պրոլետարական բանակները յերբեք չպետք ե աչքից բաց թողնեն... յեթե նրանք ցանկանում են հասնել ժամանակակից պրոլետարիատի միատեղ հաղթական մեծ ճանապարհին»։

II Խնտերնացիոնալ։ — II Խնտերնացիոնալը նույնիսկ չփորձեց միջազգային շարժման համար միասնական ծրագիր ստեղծելու։ Ճիշտ և, II Խնտերնացիոնալի առանձին կուսակցությունները ընդունեցին իրենց ծրագիրը։ Սակայն այդ ծրագրները սահմանափակվում են միայն վորոշ յերկրով, և յեթե նրանք

նույնիսկ արտահայտվում ել են հոգուտ սոցիալիզմի, ապա ամեն կերպ խուսափում են խոսել պրոլետարիատի դեկտատուրայի մասին։ Մարքսը և Ենգելսը շատ սուր կերպով քննադատեցին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջին ծրագրները, վորոնք որինակ հանդիսացան սոց. - դեմ. ուրիշ կուսակցությունների համար. — «Այս, ինչ վոր իսկապես պետք ե ասվեր, այն բացակայում ե», — ասաց Ենգելսը։ II Խնտերնացիոնալի կուսակցությունների նորագույն ծրագրները հանդիսանում են կապիտալիստական ուղինալիզացիայի ծրագրներ։

III Խնտերնացիոնալի անընդունակությունը՝ ստեղծել միջազգային միասնական ծրագիր — դա լոկ արտահայտություն եր այն փաստի, վոր II Խնտերնացիոնալի առանձին կուսակցությունները ձանաչում եյին միայն «իրենց» պետությունը, «իրենց» «հայրենիքը» և չեյին ցանկանում ընդունել և վոչ մի միջազգային պարտականություն։

III Խնտերնացիոնալ։ — III Խնտերնացիոնալը պետք ե վոր բոլոր յերկրների հեղափոխական պրոլետարիատին տար գործողության միասնական հեղափոխական միջազգային ծրագիր։ Այդ ծրագրի եյությունը լինինը բնորոշեց դեռ 1914 թ., յերբ նա ապացուցեց II Խնտերնացիոնալի վերջնական կրախը. — III Խնտերնացիոնալի առաջ խնդիր և դրվում կազմակերպել պրոլետարիատի ուժերը՝ կապիտալիստական կառավարությունների վրա հեղափոխական գրոհ տալու համար, բոլոր յերկրների բուրժուազիայի դեմ քաղաքացիական պատերազմ մշկու՝ քաղաքական իշխանությունը ձեռք գցելու համար, սոցիալիզմի հաղթանակի համար («Задачи социалистического интернационала» — 1914 թ.):

Կոմունիստական Խնտերնացիոնալի ծրագիրը հանդիսանում է պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար մղվող պայքարի ծրագիր։ «I Խնտերնացիոնալը գրեց միջազգային պրոլետարիատի՝ սոցիալիզմի համար մղվող պայքարի իդեյական հիմքերը։ II Խնտերնացիոնալը իր լավ ժամանակում հող պատրաստեց բանվորական շարժման լայն և մասսայական տարածման համար։ III Խնտերնացիոնալը, շարունակելով I Խնտերնացիոնալի գործը և ընդունելով II Խնտերնացիոնալի աշխատանքի պատողները... սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան» — ասում ե Կոմինտերնի ծրագիրը։

«Կոմունիստական մանկֆեստի» և 1 ինտերնացիոնալի ծրագրի հանձնարեղ նախատեսությունը մեր ժամանակում զառնում է իրականություն։ Սոցիալիզմի շինարարությունը մեկ յերկրում, միջազգային պայքարը ընդդեմ իմպերիալիզմի՝ սկսած խիստ զարգացած կապիտալիստական Անգլիայից և վերջացրած Աֆրիկայի ամենայնամենաց գաղութով՝ պետք ե ընթանա միասնական զեկավարության տակ։ Կոմինտերնի ծրագիրը հանդիսանում է մի ուղղեցույց՝ կոմունիզմի հեղափոխական համաշխարհային գործող բանակի համար և կլինի ուղղեցույց՝ յերկրագնդի բոլոր յերկրների միլիոնավոր պրոլետարների ու նշանակածների համար, մինչև միջազգային պրոլետարիատի համաշխարհային հաղթանակը։

Ա ՄԱՍԻՆԻՑՈՒ

Առաջնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ
Ազգային
Առաջնական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Յերրորդ Կոմունիստական ինտերնացիոնալի համաշխարհային պատմական նշանակությունը	3
2. Ընդդեմ ուժումիզմի յեկ դավանանության, նոգուս III ինտերնացիոնալի ստեղծման	6
3. Կոմինտերնի համաշխարհային հեղափոխության տարին և	11
4. Կապիտալիզմի սարիլիզացիան յեկ Կոմինտերի համաշխարհային կազմակերպության անումը	21
5. Համաշխարհային նոր պատերազմի հանդեպ — դասակարգային նոր խուռա նակատամարտերի հանդեպ	31
6. Պրոլետարիատ համաշխարհային դիկտատուրայի համար մղվող պայքարի ծրագիրը	37

ՀՀ Ազգային գրադարան



NL0187181

12265

18 члт.



И. КОМОР
**Десять лет
КОМИНТЕРНА**

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р
Москва, центр, Никольская, 10.